ՎԱՀԱԳՆ ԱՖՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու (PhD)
ՀՀ ԱԳՆ սահմանակից երկրների վարչության պետ
էլ. փոստ՝ v.afyan@mfa.am
DOI: 10.56813/2953-786X-2023.3-102

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ, ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներածություն

Հոդվածում մանրամասն ներկայացվում են Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում իրանական կողմի արձագանքներն ու պաշտոնական դիրքորոշումների հրապարակումները: Թարգմանաբար ներկայացված են, առավելապես, «ԻՌՆԱ» պաշտոնական լրատվական գործակալության հաղորդագրությունները, որոնցում ներառված են Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) պաշտոնատար անձանց դիրքորոշումները, ինչպես նաև որոշ փորձագետների և լրագրողական մեկնաբանություններ:

ԻԻՀ գերագույն գլխավոր հրամանատարը, նույն ինքը՝ Իրանի հոգևոր առաջնորդը (գերագույն առաջնորդ), սահմանում և վերահսկում է երկրի ընդհանուր պետական քաղաքականությունը, որի արտաքին քաղաքականության մասն իրականացվում է արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) կողմից: Ինչ վերաբերում է պաշտոնական դիրքորոշումների արտահայտմանը, ապա դրանում միայն լիազորություններ ունեն ԻԻՀ նախագահն, ով

երկրի գործադիր իշխանության ղեկավարն է, ԱԳ նախարարը և ԱԳՆ խոսնակը:

Ներկայացված ժամանակագրությամբ հետաքրքրական է դիտարկել թեժ մարտական գործողությունների ժամանակ արված իրանական կողմի տեսակետների արտահայտումը: Հոդվածը պայմանականորեն բաժանված է իրանական կողմի նախաակտիվացման փուլ, առաջարկային ծրագիր և դիրքորոշման ձևավորում մասերի: Եզրակացություն բաժնում անդրադարձ կա նաև պատերազմական գործողություններից հետո տեղի ունեցած մի քանի կարևորագույն իրադարձություններին:

Ուսումնասիրությունը կարող է առավել ընկալելի դարձնել Հարավային Կովկասում, մասնավորապես՝ Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ վարվող Իրանի քաղաքականությունը:

Մաս 1

Իրանական կողմի նախաակտիվացման փուլ

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված ադրբեջանաթուրքական պատերազմի վերաբերյալ իրանական լրատվամիջոցներն անդրադարձան հենց առաջին օրից: Պատերազմի մեկնարկից ի վեր ամենատարբեր պաշտոնատարներ, փորձագետներ և լրատվականներ անդրադարձել են Իրանի հետաքրքրությունների դաշտում գտնվող Կովկասի կարևորության, Գյուլիստանի պայմանագրից հետո հայերի հանդեպ ռուսների և Ադրբեջանին ուղղված թուրքական աջակցության վերաբերյալ: Նշվել է օտարերկրյա,

մասնավորապես՝ Սիրիայից և Լիբիայից բերված վարձկանների մասին: Իսկ պաշտոնական մակարդակով ընդգծվել է բոլոր երկրների ինքնիշխանության իրավունքի և տարածքային ամբողջականության հարգանքի անհրաժեշտությունը:

ԻԻՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Մահմուդ Վաեզին (1992 թ. որպես փոխարտգործնախարար ներգրավված է եղել ԼՂ հիմնախնդրի Իրանի միջնորդական առաքելությունում, իսկ տվյալ շրջանում համատեղության կարգով հանդիսանում էր Իրան-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովի համանախագահը – Վ. Ա.) հերքել է Իրանի տարածքով Ռուսաստանից դեպի Հայաստան ռազմատեխնիկայի փոխադրման մասին լուրերն ու դրանց տեսանյութերի իսկությունը[59]:

Պատերազմի մեկնարկից հետո առաջին շաբաթական ամփոփիչ ասուլիսում՝ հոկտեմբերի 3-ին, ԻԻՀ ԱԳՆ խոսնակ Սաիդ Խաթիբզադեն նշել է, որ իրանական կողմը լրջությամբ հետևում է իրավիճակին և, նախազգուշացնելով, անհանդուրժելի է համարում ընդհարման կողմերից յուրաքանչյուրի հարձակումն Իրանի տարածքի վրա: Նա միաժամանակ ընդգծել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հարգելու, խաղաղ բնակչության վրա չհարձակվելու, բախումները

---

59 کشور آذربایجان را دوست و برادر خود می دانیم و برای تمامیت ارضی آن احترام قائلیم / از هر فرصتی برای تقویت و توسعه روابط دو کشور استفاده می کنیم، پایان اشغال موجب ثبات در منطقه می شود / شایعات مطرح شده در فضای مجازی مبنی بر کمک ایران به ارمنستان کاملا بی اساس است ریاست جمهوری , ۹ مهر ۱۳۹۹, https://www.president.ir/fa/117581.
https://twitter.com/bbcpersian/status/1311326569735090176.

դադարեցնելու անհրաժեշտության և բանակցությունների անցկացման պատրաստակամության մասին[60]:

Հոկտեմբերի 17-ին ՌԴ-ում ԻԻՀ դեսպան Քազեմ Ջալալին ռուսական լրատվականին տված հարցազրույցում, անդրադառնալով ԼՂ հակամարտության կարգավորմանն ուղղված իրանական ընթացիկ դիրքորոշումներին, նշել է կողմերի հետ անկողմնակալ և լավ հարաբերությունների, հրադադարին ուղղված ռուսական կողմի միտումները ողջունելու և այլ նախաձեռնությունների, օրինակ՝ Սիրիայի հարցով Աստանայի ձևաչափի նման Ռուսաստան-Թուրքիա-Իրան գործակցության ապահովման հնարավորության մասին[61]:

Պատերազմի հետագա ընթացքում իրանական լրատվականները հանդես եկան մի քանի հրադադարների պայմանավորվածությունների չիրականացման, դրանց խախտումների, Գյանջայի հրետակոծության, Պակիստանի հատուկ ջոկատայինների ներգրավումը հերքող հաղորդագրություններով: Այստեղ հարկ է նշել, որ իրանական լրատվականները հիմնականում վկայակոչում էին ադրբեջանական աղբյուրներին, ինչը պայմանավորված էր, թերևս Բաքվում տեղակայված գրասենյակների առկայությամբ և ադրբեջաներենից առավել արագ լուրերը թարգմանելու հանգամանքներով: Հրապարակումներ եղան նաև առ այն, որ 27 տարի անց Արաքսի հյուսիսային

---

[60] Iran warns conflicting parties not to violate Iranian territory - IRNA English, Oct 3, 2020, https://en.irna.ir/news/84063202/Iran-warns-conflicting-parties-not-to-violate-Iranian-territory.

[61]Посол Ирана: Тегеран разумно подойдет к отмене оружейного эмбарго https://www.interfax.ru/amp/731807?fbclid=IwAR06sVJ9_FbsIEHINUr75GeWWEPGeq52M6I4ria01565_cWxe5KCVXiRNMI.

جلالی: از ۲۷ مهر محدودیتی برای همکاری‌های نظامی با جهان نداریم - ایرنا (irna.ir)

տարածքները կրկին անցան Ադրբեջանի տիրապետության տակ[62]:

Ինչ վերաբերում է Թավրիզում տեղի ունեցած ցույցերին[63], իրականում, ըստ տեղի հայ համայնքի ներկայացուցիչների, օրեր շարունակ պատրաստությունից հետո հավաքված մոտ 50 հոգու բիրտ ուժով ցրել է ոստիկանությունը: Ամենամեծ հավաքն իրականացվել է հոկտեմբերի 1-ին՝ մոտ 200 հոգի, որի կարգախոսներից էր՝ փակել Հայաստանի հետ սահմանը, սակայն, ըստ երևույթին ներսից հրահրվող վանկարկումներով դրանք վերափոխվել են, այսպես կոչված՝ հյուսիսային և հարավային Ադրբեջանի միացման կոչերի, ինչն էլ առիթ է հանդիսացել ուժի կիրառման համար:

Հոկտեմբերի 18-ին «ԻՍՆԱ»-ում հրապարակվեց «Ինչո՞ւ երկարեց ԼՂ հարցով Հայաստանի և Ադրբեջանի միջև ընդհարումը» վերնագրով Ադրբեջանում ԻԻՀ նախկին դեսպան Մոհսեն ՓաքԱյինի (Ադրբեջանում ԻԻՀ նախկին դեսպան - Վ. Ա.) հարցազրույցը, ով շեշտեց, որ «Իսրայելը կարծես թե հակամարտության հրահրողներից մեկն ու կրակը թեժացնողն է»[64]:

Նույն օրն ԻԻՀ պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար Ամիր Հաթամին, նշելով իրանական զենքի նկատմամբ էմբարգոյի ժամկետի ավարտի և ռազմատեխնիկական հզորությունների ու Սաուդյան Արաբիային գերազանցելու, ռազմարդյունաբերության վրա

---

[62] تماشاگران جنگ همسایگان - ایرنا, ۲۷مهر۱۳۹۹, http://bitly.ws/RXPR.
Telegram: Contact @Tabrizonline

[63] Թավրիզում իրավիճակը լարված է. տեղի ադրբեջանցիները պահանջում են փակել Իրան-Հայաստան սահմանը, 18 հոկտեմբեր 2020, https://hetq.am/hy/article/123262.

[64] چرا درگیری آذربایجان و ارمنستان بر سر قره‌باغ طولانی شد؟ - ایرنا, ۲۷مهر۱۳۹۹http://bitly.ws/RXTb.

ծախսվող միջոցների, մարտունակ ԱԹՍ-ների մասին, ընդգծել է, որ բոլոր ժողովուրդներն ունեն իրենց տարածքային ամբողջականությունը պաշտպանելու իրավունք[65]:

Հաջորդ օրն ԻԻՀ պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար Ամիր Հաթամին «Al Jazeera»-ին տված հարցազրույցում նշել է. «ԻԻՀ-ն կարևորում է զենքի մրցավազք չսկսելը, որը տարածաշրջանը վերածելու է վառոդի տակառի»: Հարցազրույցի մեկ այլ հատվածում նա ասել է, որ Իրանը պաշտոնական և հստակ նախազգուշացումներ է տվել Ադրբեջանին և Հայաստանին սահմանային տարածքների անվտանգության վերաբերյալ: ԻԻՀ պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարարը, հերքել է Ռուսաստանից Հայաստան զինամթերքի փոխադրման համար Իրանի սահմանների օգտագործման մասին մեղադրանքները[66]:

ԻԻՀ ԱԳՆ խոսնակն իր թվիթերյան էջում հոկտեմբերի 19-ին նշել է. «Մտահոգիչ պատկերներ են հրապարակվում Ղարաբաղի բախումներից: Այս հակամարտության երկու կողմերին ուղղված. նպատակը չի արդարացնում միջոցը: Իրանը չի ընդունում թաքֆիրական (մոլեկրոն էքստրեմիզմ՝ մահմեդականներին հավատուրացության մեջ մեղադրող խմբավորում - Վ. Ա.) ոճի գլխատումները և կամ դրա դիմաց քաղաքների ու անմեղ մարդկանց թիրախավորումը:

---

[65] ۲۷مهر۱۳۹۹, ایرنا -وزیر دفاع: ۹۰ درصد نیازهای دفاعی را در داخل کشور تولید می‌کنیم http://bitly.ws/RXTZ.

[66] سرتیپ حاتمی: آماده امضای توافقنامه نظامی و امنیتی با کشورهای حاشیه خلیج فارس هستیم- ایرنا, ۲۸مهر ۱۳۹۹, http://bitly.ws/RXV5.

Օրենքին և միջազգային իրավունքին հավատարիմ մնալը երկու կողմերից էլ անհրաժեշտություն է»[67]:

Հոկտեմբերի 19-ին Խորվաթիայում ԻԻՀ դեսպան Փարվիզ Էսմայիլին «Vecerni list» օրաթերթին տված հարցազրույցում նշել է. «Մենք դեմ ենք ցանկացած բաժանմանն ու էթնիկ կամ տարածքային ընդհարումներին: Ի տարբերություն տարածաշրջանի որոշ երկրների, մենք լավ հարաբերություններ ունենք թե՛ Ադրբեջանի և թե՛ Հայաստանի հետ: Համոզված ենք, որ տարածաշրջանում ցանկացած երկրի, հատկապես՝ արտատարածաշրջանային տերությունների միջամտությունը կսրի ճգնաժամը: Իրանի մոտեցումը տարածաշրջանային անվտանգությունն է: Մենք մեր հարևանների անվտանգությունը համարում ենք մեր սեփական անվտանգությունը: Ուստի հարևանների միջև ցանկացած ռազմական բախում մտահոգիչ է մեզ համար: Սակայն, վերջին բախումների վերաբերյալ պետք է նկատել, որ Իրանը տարածաշրջանում միակ երկիրն է, որը բարեկամական կապեր ունի ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի հետ և նրանց հետ ունի մոտ 800 կիլոմետրանոց սահման: Բնական է, որ մնացածներից ավելի շատ անհանգստություններ ունենանք: Իրանն ունի արտաքին քաղաքական ամուր սկզբունքներ, որոնք են խաղաղության, երկխոսության և տարածաշրջանային համագործակցության կոչերը: Մենք երբեք հուզական որոշում չենք կայացնի: Հայաստանի ու Ադրբեջանի միջև վերջերս տեղի ունեցած բախումներում հրետանային արկեր ընկան մեր տարածքում գտնվող Խոդաֆարինի շրջանում:

---

[67]Saeed Khatibzadeh on Twitter: " تصاویر نگران کننده‌ای از درگیری‌ها در #قره‌باغ منتشر میشود. به هر دو طرف این منازعه: هدف وسیله را توجیه نمی کند. #ایران نمی پذیرد به سبک تکفیری‌ها سری بریده شود و یا در مقابل، شهرها و بیگناهان مورد هدف قرار گیرند. پایبندی به قوانین و حقوق بین‌الملل از سوی هر دو طرف ضروری است, https://t.co/CSKrcb6tzB" / Twitter.

Սա տարածքային ամբողջականության խախտում էր և Իրանի քաղաքացիների անվտանգության զրկում: Մենք նախազգուշացրեցինք: Նրանք ներողություն խնդրեցին և ընդգծեցին, որ դա դիտավորյալ չէր: Խոստացան այլևս չի կրկնվի: Հուսով ենք այդպես կլինի: Կրկնվելու դեպքում մենք մեզ իրավունք կվերապահենք ցանկացած որոշում կայացնել՝ ազգային անվտանգության և մեր քաղաքացիների ապահովման համար: Կարևորելով Ադրբեջանի ազգային ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պահպանումը՝ Իրանը հայտարարել է իր պատրաստակամությունը՝ նպաստելու խաղաղության հաստատմանը և ԼՂ հակամարտության կայուն լուծմանը՝ Իրան-Թուրքիա-Ռուսաստան տարածաշրջանային նախաձեռնության շրջանակներում՝ որպես Մինսկի խմբի մեխանիզմի լրացում: Մենք դատապարտում ենք նաև քաղաքացիական անձանց և բնակավայրերի դեմ ցանկացած հարձակում: Ինչպես վերջերս Գյանջա քաղաքի վրա հարձակումը և այնտեղ մարդկանց սպանությունները»[68]:

Հոկտեմբերի 20-ին «ԻՌՆԱ»-ի Բաղդադի գրասենյակի բաժինը հաղորդագրություն տարածեց «Ղարաբաղյան պատերազմի ծուխը Իրաքի երկնքում» վերտառությամբ, որում, մասնավորապես՝ նշվում էր պատերազմում վարձկաններ ներգրավվելու Իրաքում Հայաստանի և Ադրբեջանի դեսպանությունների փոխադարձ մեղադրանքների մասին[69]:

Հոկտեմբերի 21-ին «ԻՌՆԱ»-ի «Երևանն ու Բաքուն հուսով են, որ Իրանը կօգնի վերջ տալ ղարաբաղյան հակամարտությանը» վերնագրով հաղորդագրության մեջ

---

[68] ۲۸مهر ۱۳۹۹,سفیر ایران در کرواسی: ایران همواره در قفقاز نقش متوازن‌کننده داشته است- ایرنا, http://bitly.ws/RXWE.

[69] ۲۹مهر ۱۳۹۹, دود جنگ قره باغ در آسمان عراق- ایرنا, http://bitly.ws/RXXs.

նշվել է, որ Հայաստանն ու Ադրբեջանը Ղարաբաղի հակամարտության տարածքում երկու երկրների միջև բախումներին վերջ տալու համար արևմտյան կարգավորումներից հուսահատ աչքները հառել են Իրանի օգնությանը: «Ե՛վ Հայաստանը, և՛ Ադրբեջանը համոզված են, որ Ֆրանսիան, Միացյալ Նահանգները և որոշ այլ աշխարհի տերություններ անհրաժեշտ չափով չեն ջանում Հարավային Կովկասում հակամարտությունը դադարեցնելու ուղղությամբ»[70]:

Հոկտեմբերի 22-ի «Ղարաբաղյան բարդ հանգույց» վերտառությամբ «Իրան» օրաթերթի հոդվածում նշված է. «Ղարաբաղի ճգնաժամը սկիզբ է առել նախասովետական ժամանակաշրջանից: 1921 թ. Խորհրդային Միությունն իր քաղաքականության շրջանակներում ԼՂ շրջանը հանձնել է Ադրբեջանին, և այդ ժամանակվանից ի վեր շրջանն այդ երկրի տարածքային ամբողջականության մաս է կազմում»: Հոդվածում Ադրբեջանում ԻԻՀ նախկին դեսպան Մոհսեն ՓաքԱյինը փորձ է կատարել անկողմնակալ ներկայացնել պատմությունը, սակայն հիշատակել է ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերի մասին և ընդգծել 7 շրջանների պատկանելության, ինչպես նաև Մադրիդի սկզբունքների, Լավրովի պլանի մասին՝ ներկայացնելով, որ բոլոր առաջարկները մերժվել են ՀՀ և Արցախի կողմից: Անդրադառնալով Իրանի դիրքորոշումներին՝ նշված է, որ Իրանի սկզբունքային քաղաքականությունը հիմնված է մի քանի առանցքների վրա. նախ՝ հարևանության քաղաքականության շրջանակներում Իրանը ցանկություն և կամք ունի բարեկամական հարաբերություններ ունենալ ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի հետ և

---

[70] ایروان وباکو به کمک ایران برای پایان درگیری قرهباغ امیدوارند- ایرنا, ۳۰مهر۱۳۹۹, http://bitly.ws/RXYq.

հաստատել ամուր կապեր: Երկրորդ՝ Իրանը սկզբունքորեն դեմ է երկրների տարածքային ամբողջականության խախտմանը և այդ պատճառով մինչ այժմ աջակցել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությանն ու սկզբունքորեն դեմ է անջատողականությանը: Այս տեսակետից Իրանը չի աջակցել ԼՂ-ի անջատմանը Ադրբեջանից: ԻԻՀ-ն չի կարող այլ բան անել, քան միայն վարել և ապավինել այդ քաղաքականությանը: ՄԱԿ-ի ԱԽ-ն կարող է և պետք է օգտագործի իր մեխանիզմները և, իր չորս բանաձևերին համապատասխան, Հայաստանին հորդորի իրականացնել այդ բանաձևերի դրույթներից մեկը՝ Ադրբեջանի յոթ շրջանների օկուպացիայի վերացումը, որին կհաջորդեն բանակցությունները Ղարաբաղի ճգնաժամի վերաբերյալ[71]:

ԻԻՀ հրամկազմի սահմանամերձ շրջաններ այցելության մասին առաջին անգամ հայտնի դարձավ հոկտեմբերի 22-ին: ԻԻՀ բանակի ցամաքային ուժերի հրամանատար Քիումարս Հեյդարին, ըստ «Azariha» լրատվականի տելեգրամյան հաղորդագրության, այցելել է Խոդաֆարինի տարածք՝ տեղում ծանոթանալով իրավիճակին: Նրան ուղեկցել են Ջոլֆայի և Խոդաֆարինի քաղաքային ղեկավարները, Մարանդի 321-րդ շարժական գրոհային բրիգադի հրամանատարը և Ջոլֆայի շրջանի սահմանապահ հրամանատարը[72]:

Հոկտեմբերի 22-ի երեկոյան Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիբ Էրդողանի հետ կայացած հեռախոսազրույցի ընթացքում ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին նշել է, որ

---

[71] گره پیچیده قره‌باغ- ایرنا, ۱آبان۱۳۹۹, http://bitly.ws/RXZF.

[72] فرمانده نیروی زمینی ارتش از مرزهای ایران با ارمنستان و باکو بازدید کرد, Oct 22, 2020, https://t.me/ir_Azariha/11295?fbclid=IwAR0R8ug_awqmzmtA8Snw5BiwL6YBt_sdz9awPLVcBbOtrwl_8wIixyEVPA.

«Ահաբեկչական խմբավորումները մեծ վտանգ կարող են դառնալ տարածաշրջանի համար»: Նա, անդրադառնալով ԼՂ ճգնաժամին և Ադրբեջանի ու Հայաստանի հետ Իրանի սահմանային քաղաքներում անվտանգության պահպանման անհրաժեշտությանն, ավելացրել է. «Այս առումով մեր դիրքորոշումը միանգամայն պարզ է և համոզված ենք, որ պատերազմը լուծում չէ, և խնդիրները պետք է լուծվեն բանակցությունների միջոցով»: «Համոզված եմ, որ Իրանն ու Թուրքիան, որպես տարածաշրջանի երկու հզոր երկրներ, ինչպես նաև Ռուսաստանը կարող են օգնել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը և միջազգային իրավունքի ու տարածքային ամբողջականության կիրառմամբ ականատես դառնալ տարածաշրջանում խաղաղության հաստատմանը»[73]:

Հոկտեմբերի 23-ին ԻԻՀ ԶՈՒ ԳՇ խոսնակ, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) գեներալ Աբոլֆազլ Շեքարչին նշել է. «Չենք հանդուրժի ցանկացած սխալմունք և սպառնալիք Հայաստանի և Ադրբեջանի հետ ԻԻՀ սահմաններին և խիստ կվարվենք ցանկացած ագրեսիայի և սպառնալիքի հետ»: Նա նշել է. «ԻԻՀ ԶՈՒ-ն Իրանի սահմանային գծերի պաշտպանությունն ամրապնդելու հետ մեկտեղ հայտարարում է, որ Իրանի սահմանային շրջանների և ժողովրդի անվտանգությունը մեր կարմիր գիծն է, և այդ կապակցությամբ հիշեցնում ենք հակամարտող երկու երկրներին էլ, որ զգույշ լինեն օտարների կրակի բռնկումից ու չարագործություններից, երկուստեք խնդիրները լուծեն

[73]Iran-Turkey ties a model for neighbours/ Emphasis on fighting terrorism in region; terrorist groups can be a major threat to region/ Continued cooperation between Iran, Turkey, Russia essential to resolve the Syrian crisis,2020/10/22,https://www.president.ir/en/117912.

խաղաղ ուղիներով և երկխոսության միջոցով և իրենց ռազմական գործողություններում անզգուշություններով չվտանգեն ԻԻՀ տարածքային սահմաններն ու մեր հայրենակիցների անվտանգությունն ու հանգստությունը»: ՀՈՒ ԳՇ գլխավոր խոսնակը պարզաբանել է. «Երկու երկրների հետ Իսլամական Իրանի բարիդրացիության պահպանումն ու համբերատարությունը չպետք է չարաշահվի, ուստի նախազգուշացնում ենք, որ խիստ ենք վարվելու ցանկացած ագրեսիայի կամ սպառնալիքի հետ»[74]:

Հոկտեմբերի 23-ին Աստարայի ուրբաթօրյա աղոթապետն ասել է. «Համաձայն միջազգային օրենքների և պայմանագրերի՝ Ղարաբաղն Ադրբեջանի տարածքի մաս է, բայց պատերազմն ու արյունահեղությունը լավ լուծում չեն այդ խնդրի համար, և դրա լուծման ուղին այդ երկրի բանակցելն է Հայաստանի հետ»: Հոջաթոլէսլամ Քազեմ Հաֆեզնիան ուրբաթօրյա աղոթքի ծիսակատարության քաղաքական քարոզների բաժնում նշել է. «Ղարաբաղի հակամարտության հարցում ընդհարված կողմերն ավելի լավ է հետ կանգնեն պատերազմից ու արյունահեղությունից, իհարկե պետք է ուշադրություն դարձվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանմանը»: Նա հայտարարել է. «Ադրբեջանի և Հայաստանի միջև պատերազմի օգուտները բաժին կհասնեն Սիոնիստական ռեժիմին, և այս պատերազմի պատրվակով տարածաշրջանում ահաբեկչական ուժերի տեղակայումն ի վնաս հարևան երկրների է»[75]:

Ադրբեջանում ԻԻՀ դեսպան Սեյեդ Աբբաս Մուսավին (ԻԻՀ ԱԳՆ նախկին խոսնակ – Վ. Ա.) հոկտեմբերի 23-ին թվիթերյան գրառում կատարեց հետևյալ բովանդակությամբ.

---

[74] خطا وتهدید در مرزهای مشترک ایران را تحمل نمی‌کنیم, ۲آبان۱۳۹۹, http://bitly.ws/RY46.

[75] امام جمعه آستارا: راه حل مناقشه قره‌باغ مذاکره است- ایرنا, ۲آبان۱۳۹۹, http://bitly.ws/RY4S.

«Իրանի և Ադրբեջանի 760 կիլոմետրանոց ընդհանուր սահմանը կմնա հավետ որպես բարեկամության, խաղաղության և անվտանգության սահման երկու հարևան ժողովուրդների համար առանց չարակամների ներկայության և միջամտության: Իրանցիներն ուրախ են Ադրբեջանի իրենց մահմեդական քույրերի և եղբայրների ուրախությամբ»: Թեև իրանցի դեսպանն այնուհետև քննադատության արժանացավ անկողմնակալության սկզբունքը չպահպանելու համար ու ջնջեց այդ գրառումը, այն առկա է «ԻՌՆԱ»-ի հաղորդագրություններում[76]:

Հոկտեմբերի 23-ին Իրանի սահմանամերձ շրջաններ է այցելել ԻՀՊԿ ցամաքային ուժերի հրամանատար, գեներալ Մոհամմադ Փաքփուրը, տեղում ծանոթացել Խոդաֆարինի շրջանի վիճակին[77]: Նա, նշելով, որ Իրանի ժողովրդի անվտանգությունն ու ազգային շահերը համարվում են իրանական կողմի կարմիր գիծ, ընդգծել է, որ ցանկացած անապահովություն և սպառնալիք կարժանանա հակազդեցուցիչ քայլերի: Տեղում իրավիճակը զննելուց հետո, նա նշել է, որ սկզբից էլ ուշադիր հետևել են դրությանը, իսկ տվյալ ընթացքում զորամիավորումներ են տեղակայվել, ասել է, որ հարգում են հարևան երկրների տարածքային ամբողջականությունը՝ միաժամանակ ընդգծելով. «Ցանկացած սահմանային աշխարհաքաղաքական փոփոխություն ԻԻՀ կարմիր գիծ է»[78]: Զուգահեռաբար, պատերազմի ընթացքում առաջին անգամ լուրեր հրապարակվեցին, որ ԻՀՊԿ-ն Խոդաֆարինում ու Ջոլֆայում

---

[76] واکنش سفیر ایران به توئیتهای رئیس جمهوری آذربایجان- ایرنا, ۲آبان۱۳۹۹, http://bitly.ws/RY5G.

[77] فرمانده نیروی زمینی سپاه ازشهرستان خداآفرین بازدید کرد- ایرنا, ۲آبان۱۳۹۹, http://bitly.ws/RY68.

[78] فرمانده نیروی زمینی سپاه: امنیت مردم ومنافع ملی خط قرمز ایران است-- ایرنا, ۴آبان۱۳۹۹, http://bitly.ws/RY6Q.

մոտոհրաձգային բրիգադ է տեղակայել, ինչը հետագայում հանվեց լրահոսից: Այնուամենայնիվ առկա են տեսանյութեր[79], մասնավորապես՝ զինտեխնիկայի ցերեկային ժամերի տեղափոխման վերաբերյալ, ինչը բավականաչափ արտասովոր էր իրանցի տեղաբնակների համար: Թերևս դրանով էր պայմանավորված հոկտեմբերի 25-ին ԻՀՊԿ ցամաքային ուժերի հրամանատար, գեներալ Մոհամմադ Փաքփուրի պարզաբանումների հրապարակումն առ այն, որ զորքերի տեղաշարժը երկու պատգամ է պարունակում. նախ՝ իրանցիները հանգիստ լինեն, որ իրենց սահմանները վերահսկելի են, և ապա կարևորվում է տարածաշրջանի բոլոր երկրների տարածքային ամբողջականությունն՝ առանց սահմանների փոփոխության[80]:

Հոկտեմբերի 26-ին արդեն Իրանի սահմանամերձ Խոդաֆարինի շրջաններ է այցելել ԻՀՊԿ գլխավոր հրամանատարը: Գեներալ-լեյտենանտ Հոսեյն Սալամիի դաշտային այցի ընթացքում զննվել են հակամարտության տարածքի իրավիճակը և Իրանի վրա գցած հակամարտող երկրների կողմից հրթիռների վայրերը, ինչպես նաև ուսումնասիրվել է տարածաշրջանային և նահանգային սահմանների իրավիճակը: Այցի ընթացքում Ջոլֆայի շրջանի պաշտոնատար անձինք և սահմանային հրամանատարը ներկայացրել են իրավիճակը: ԻՀՊԿ-ն հանդես է եկել նաև հետևյալ հայտարարությամբ. «Մեր սահմանների վրա ցանկացած անապահովություն և սպառնալիք, որը վնասում է մեր սիրելի ժողովրդի անվտանգությանը և հոգեկան հանգստությանը, անընդունելի է»[81]:

---

[79] Pooya Hosseini |Facebook

[80] برای تمامیت ارضی همه کشورهای منطقه احترام قائلیم- ایرنا, ۴آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYac.

[81] بازدید فرمانده کل سپاه ازمناطق مرزی خداآفرین- ایرنا, ۵آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYaV.

Հոկտեմբերի 26-ի «ԻՌՆԱ»-ում կովկասյան հարցերով փորձագետ Շահիբ Բահմանը նշել է, որ սկզբնապես Իրանը լուրջ ուշադրություն չէր դարձնում Ղարաբաղյան հակամարտության խորությանը: Ըստ նրա՝ թվում էր, թե պարզ ընդհարում է տեղի ունենում Ադրբեջանի և Հայաստանի միջև, այն դեպքում, երբ խոր կապ կար Կովկասի և Արևմտյան Ասիայի ճգնաժամերի միջև: «Այս ճգնաժամի առաջացման կարևորագույն նպատակներից է Իրանի հյուսիսային սահմաններում վերջինիս աշխարհաքաղաքական ներուժի սպառումը, որի մասին են վկայում Ադրբեջանի ներկայիս ռազմական գործողությունները: Բախումները տեղի են ունենում Իրանի հետ սահմանամերձ շրջաններում և այդ ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերի արձանագրած առաջխաղացումը կարող է ապագայում խաթարել տարածաշրջանի անվտանգությունը: Այս հակամարտությունը կարող է Իրանի ներսում խթանել միջէթնիկ սադրանքներ և շարունակություն հաղորդել Թեհրանի դեմ Բաքվի վերջին տարիներին որդեգրած քաղաքականությանը: Հնարավոր է՝ Ադրբեջանն այդ նպատակի համար իր երկրի ներսում նաև ավելացնի ճնշումներն իսլամադավանների նկատմամբ: Թուրքիան այս գործընթացներում ունի երկարաժամկետ ծրագրեր: Եթե լինի ադրբեջանական ԶՈՒ կայուն առաջխաղացում, ապա տարածաշրջանում Թուրքիայի ռազմական ներկայության հիմքեր կստեղծվեն: Մեծ է հավանականությունը, որ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան տարածաշրջանում կկառուցի ռազմաբազա և կստեղծի անվտանգային սպառնալիքներ Իրանի համար», - նշել է հոդվածագիրը[82]:

---

[82] مشارکت بازیگران خارجی تداوم آتش‌بس درقره باغ را با مشکل مواجه کرده است, ۵آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYbu.

Զուգահեռաբար, իրանական պաշտոնական լրատվականով լուրեր էին հրապարակվում դեպի երկրի հյուսիսային սահմաններ իրականացվող զորաշարժի մասին: Մասնավորապես, հոկտեմբերի 28-ին նշվել է, որ Մարանդի շրջանում տեղակայված ԻԻՀ բանակի 321-րդ շարժական գրոհային բրիգադի ստորաբաժանումների մի մասն ուղևորվել է Իրանի հյուսիս-արևմտյան սահմանային շրջաններ՝ ամրապնդելու երկրի սահմանային պաշտպանությունը: ԻԻՀ բանակի հյուսիս-արևմտյան տարածքային ռազմաբազայի հրամանատարը լրատվականների հետ զրույցում հայտարարել է. «Նահանգի ստորաբաժանումների մի մասը նոր կառուցվածքով և կազմավորմամբ պատրաստ է ներկա գտնվել որոշակիացված սահմանային կետերում»[83]:

Մաս 2

Իրանական կողմի առաջարկային ծրագիր

Հոկտեմբերի 27-ին մի քանի անգամ լուրեր հրապարակվեցին ԻԻՀ ԱԳ նախարարի քաղաքական հարցերով տեղակալ Սեյեդ Աբբաս Արաղչիի Բաքու, Մոսկվա, Երևան և Անկարա նախատեսվող այցելության մասին՝ ԼՂ հակամարտության կարգավորման հարցում Իրանի նախաձեռնողականությունն առաջ մղելու

---

83 تیپ ۳۲۱ ارتش مرند به مرزهای شمال غرب اعزام شد- ایرنا ۷آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYeN.

նպատակով[84]: Մինչ նշված մայրաքաղաքներ այցելությունն իրանցի դիվանագետը եղել է Իրանի հյուսիսային շրջաններում, մասնավորապես՝ Թավրիզում, Ասլանդուզում և Խոդաֆարինում, ԻԻՀ Արևելյան Ատրպատականի և Արդաբիլի նահանգապետարաններում, հանդիպել բարձրաստիճան քաղաքական և ռազմական պաշտոնյաների հետ: ԻԻՀ փոխարտգործնախարարն, ընդգծելով Խոդաֆարին և ՂըզՂալասի սահմանային ամբարտակների կառուցման և շահագործման վերաբերյալ Ադրբեջանի հետ փոխըմբռնման հուշագրի նկատմամբ Իրանի հավատարմության մասին, ասել է. «Այս ամբարտակների շահագործման ցանկացած փոփոխություն պահանջում է նոր քաղաքական ըմբռնում և ԻԻՀ-ն պատրաստ է հնարավորինս շուտ սկսել այդ կապակցությամբ անհրաժեշտ բանակցությունները»: Անդրադառնալով հարևան և բարեկամ Ադրբեջանի հետ Իրանի պատմական առնչություններին՝ Արաղչին ավելացրել է. «Այս սահմանային ամբարտակները համատեղ կարգով պետք է այնպես շահագործվեն, որ ոչ մի վնաս կամ սպառնալիք չանդրադառնա մեր սահմանամերձ տարածքներին»[85]: Նա հույս է հայտնել, որ ԻԻՀ ծրագիրը կարժանանա կողմերի հավանության, որոնց շուրջ քննարկումներ է ունեցել նաև Թավրիզում ԻԻՀ գերագույն առաջնորդի ներկայացուցչի հետ[86]: Արևելյան Ատրպատականի նահանգապետ Մոհամմադռեզա Փուրմոհամմադին Արաղչիի հետ

---

[84] خطیبزاده: عراقچی به باکو، مسکو، ایروان و آنکارا سفرمی‌کند - ایرنا,۱۳۹۹آبان۶, http://bitly.ws/RYfx.

معاون وزیر امور خارجه از مناطق مرزی استان اردبیل بازدید کرد - ایرنا , ۱۳۹۹آبان۶, http://bitly.ws/RYgJ

بازدید عراقچی از مناطق مرزی خداآفرین - ایرنا ,۱۳۹۹آبان۶, http://bitly.ws/RYhs.

[85] عراقچی: امنیت مرزهایمان غیرقابل اغماض است - ایرنا , ۱۳۹۹آبان۶, http://bitly.ws/RYhG.

[86] عراقچی: ایران به دنبال صلح پایدار در منطقه است - ایرنا ,۱۳۹۹آبان۶, http://bitly.ws/RYia.

հանդիպումից հետո, անդրադառնալով սահմանների անվտանգության վերաբերյալ ԱԳՆ-ին ուղղված իր նախորդ նամակներին, ասել է. «Ադրբեջանը և Հայաստանը մեր հարևաններն են, և մենք, հարգելով երկրների տարածքային ամբողջականությունը, կողմ ենք հակամարտության խաղաղ լուծմանը և բռնազավթմանը վերջ տալուն: Երկրի դիվանագիտությունը նույնպես անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի այդ կապակցությամբ»[87]:

Հոկտեմբերի 27-ին ԻԻՀ ԱԳ նախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆն, անդրադառնալով ԼՂ հակամարտության հարատև կարգավորման իրանական պատկերացրած ծրագրին, հայտարարել է որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարգումն ու հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելն ու միջազգային սահմանների չփոփոխումը համարվում է ԻԻՀ տվյալ ծրագրի ակտիվ դիվանագիտության սկզբունքներից: Նա ասել է, որ թաքֆիրական և հնարավոր է այլ ահաբեկիչների առկայությունը տարածաշրջանում մտահոգություն է, որն, ուղիղ կերպով ասած, անհանդուրժելի է ԻԻՀ համար[88]:

Հոկտեմբերի 27-ի երեկոյան Բաքու ժամանելուն պես ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ, հատուկ բանագնաց Արաղչին, մանրամասներ հաղորդելով իրանական նախաձեռնության մասին, հայտարարել է. «Մի քանի փուլով ծրագիրը կարող է իրավիճակը բերել կայուն խաղաղության և վերջ տալ առկա հակամարտություններին և, իհարկե, Ադրբեջանի տարածքների բռնազավթմանը»: ԻԻՀ

---

87 عراقچی: ایران طرح ابتکاری برای حل مسالمت آمیز جنگ قره باغ دارد - ایرنا ,۶آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYiA.

88FM Zarif: Iran's plan for Nagorno-Karabakh conflict to be discussed - IRNA English, Oct 27, 2020, https://en.irna.ir/news/84090351/FM-Zarif-Iran-s-plan-for-Nagorno-Karabakh-conflict-to-be-discussed.

քաղաքական հարցերով փոխարտգործնախարարը, Իրանի նախաձեռնության կարևոր տարր նշելով Ադրբեջանի տարածքների բռնազավթման դադարեցման հարցը, հավելել է. «Ղարաբաղի հակամարտությունը դադարեցնելու Իրանի նախաձեռնության մեկ այլ հիմք է հանդիսանում փոքրամասնությունների և հումանիտար իրավունքների պաշտպանությունը»: Արաղչին ասել է. «Թշնամության ավարտը և ազդեցիկ երկրների օգնությամբ բանակցությունների սկիզբը՝ խաղաղության երաշխավորման նպատակով, ԻԻՀ նախաձեռնության մեկ այլ հիմնարար առանցք է»: Նա ավելացրել է. «Մենք այս բոլոր հարցերը խորհրդակցում ենք տարածաշրջանի երկրների հետ և հուսով ենք, որ այս ծրագիրը կարող է հասնել իրականացման ցանկալի կետին»: Արաղչին նաև, բնութագրելով Իրանն ու Ադրբեջանը որպես երկու բարեկամ և հարևան երկրներ, ասել է. «Մեր միջև առկա են ջերմ հարաբերություններ, և մենք միշտ աջակցում ենք Ադրբեջանի ջանքերին՝ ազատագրելու իրենց գրավյալ քաղաքներն ու շրջանները, և Ադրբեջանի ու տարածաշրջանում մնացած երկրների տարածքային ամբողջականությունը և սահմանների անփոփոխելիությունը մի կարևոր և անխախտելի սկզբունք է, որը պետք է շարունակաբար պահպանվի»[89]:

Հոկտեմբերի 28-ին ԻԻՀ նախագահի հատուկ բանագնաց Սեյեդ Աբբաս Արաղչին հանդիպել է Ադրբեջանի ԱԳ փոխնախարար Խալաֆ Խալաֆովի հետ, որից հետո բանակցությունները շարունակվել են ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հետ: ԻԻՀ ԱԳ նախարարի քաղաքական հարցերով տեղակալն այդ բանակցություններից հետո

---

[89] عراقچی بخشی از طرح ابتکاری ایران برای برقراری صلح در قرهباغ را اعلام کرد - ایرنا, ۶آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYk2 .

հանդիպել և զրուցել է Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաևի և Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիևի հետ[90]: ԻՀՀ ԱԳ փոխնախարարը նույն օրը երեկոյան թվիթերյան գրառմամբ նշել է. «Երկարատև դրական և կառուցողական հանդիպմանն Ադրբեջանի նախագահին ներկայացրեցի Իրանի տարածաշրջանային նախաձեռնության ծրագիրը՝ օգնելու համար վերջ տալ ԼՂ հակամարտությունը»[91]:

Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքի «ԻՌՆԱ»-ի վկայակոչման համաձայն՝ Իլհամ Ալիևն այդ հանդիպմանն անդրադարձել է ավելի քան մեկ ամիս շարունակվող Ադրբեջանի և Հայաստանի միջև ռազմական բախումներին և ասել. «Մենք ազատագրում ենք մեր հողերը զավթիչներից և միջազգային իրավունքի ու պատմական արդարության չափանիշներ ենք հաստատում»: Ալիևն անդրադարձել է նաև Ադրբեջանի Բարդա քաղաքի վրա հայկական ուժերի կողմից երկու օր հաջորդաբար իրականացվող հրթիռային հարձակմանը և շեշտելով հարձակման հետևանքների մասին, Հայաստանին մեղադրել է հրադադարի պայմանավորվածությունների խախտման մեջ: Ադրբեջանի նախագահը նշել է, որ ազատագրված հողերի իրավիճակը շատ ողբալի են եղել, և բոլոր բնակավայրերն ու պատմական հուշարձաններն ու կրոնական վայրերը, այդ թվում՝ մզկիթներն այդ տարածքներում ամբողջությամբ ավերվել են և ապականվել:

---

90 ۷آبان, آغاز رایزنی های عراقچی درباره طرح ابتکاری ایران برای حل مناقشه قره باغ در باکو - ایرنا ۱۳۹۹, http://bitly.ws/RYkA .

91 Seyed Abbas Araghchi on Twitter: "Introduced Iran's Regional Initiative to Help in Ending the Nagorno-Karabakh Conflict to H. E. Ilham Aliyev President of Azerbaijan in a positive and constructive long meeting. https://t.co/1Te82eugjZ" / Twitter

Նա նաև անդրադարձել է ԻԻՀ հետ այդ երկրի որոշ սահմանային տարածքների ազատագրմանը հայկական ուժերի ներկայությունից և ավելացրել. «Այդ գործընթացի կապակցությամբ շնորհավորել եմ Ադրբեջանի և Իրանի ժողովրդին և հրամայել, որպեսզի մեր երկրի սահմանապահ ուժերը հնարավորինս շուտ անհրաժեշտ պաշտպանության ենթակառուցվածքներ ստեղծեն երկու երկրների համատեղ սահմանի տվյալ հատվածում»[92]:

Հոկտեմբերի 28-ի լույս 29-ի գիշերն ԻԻՀ ԱԳ նախարարի քաղաքական հարցերով տեղակալ Սեյեդ Աբբաս Արաղչին, որպես ԻԻՀ հատուկ բանագնաց ժամանել է Մոսկվա՝ առաջ տանելու համար ղարաբաղյան հակամարտության կարգավորման Իրանի նախաձեռնությունը և խորհրդակցելու այդ առումով ՌԴ համապատասխան պաշտոնյայի հետ: Նա, ժամանելով Մոսկվայի օդանավակայան, «ԻՌՆԱ»-ի լրագրողին ասել է. «ԵԱՀԿ Մինսկի խումբը վերջին 30 տարվա ընթացքում չի կարողացել որևէ բան անել Ադրբեջանի և Հայաստանի միջև տարածայնությունները կարգավորելու համար, իսկ ԻԻՀ-ն իր նախաձեռնողական ծրագրով փորձում է տարածաշրջանային համագործակցությամբ վերջ տալ Բաքու-Երևան տարածայնություններին»[93]:

ՌԴ ԱԳ նախարարի Կովկասի և Կենտրոնական Ասիայի հարցերով տեղակալ Անդրեյ Ռուդենկոյի հետ հանդիպմանն Արաղչին ասել է. «Թեհրանի ծրագիրը հիմնված է մարդասիրական սկզբունքների վրա և

---

[92]Azerbaijan welcomes Iran's initiative to halt clash with Armenia, diplomat says - IRNA English, Oct 29, 2020,https://en.irna.ir/news/84092019/Azerbaijan-welcomes-Iran-s-initiative-to-halt-clash-with-Armenia.

[93] عراقچی: طرح ایران برای حل مناقشه قره‌باغ بر مبنای اصول انسان‌دوستانه است - ایرنا, ۸آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYm4 .

ուշադրություն է դարձնում ներգրավված կողմերի ցանկություններին»: «Մենք տարածաշրջանային մոտեցում ենք առաջարկել այն երկրներին, որոնք առանցքային դեր են խաղում, և այդ առումով Ռուսաստանը տարածաշրջանի կարևոր երկրներից մեկն է: ԻԻՀ առաջարկը հիմնված է հումանիտար սկզբունքների վրա, ներառյալ հրադադարի ռեժիմի հաստատումը, բնակավայրերի և խաղաղ բնակիչների վրա հարձակումների դադարեցումը և փախստականների իրենց տներ վերադարձը», - ասել է Արաղչին՝ ավելացնելով. «Միջամտություններ իրականացվում են տարածաշրջանից դուրս այն երկրների կողմից, որոնք ցանկություն չունեն՝ տարածաշրջանում խաղաղություն լինի»: Ըստ փոխարտգործնախարարի՝ Իրանի ծրագրի առաջին քայլում տարածաշրջանի երկրները պահպանում են մի շարք սկզբունքներ՝ ներառյալ բռնազավթման վերջ տալը, տարածքային ամբողջականության հարգումը, ինքնիշխանության հարգումը, սահմանների անձեռնմխելիության սկզբունքը, հումանիտար և փոքրամասնությունների իրավունքների հարգումը և հարձակումների բացակայությունը խաղաղ բնակչության և կենտրոնների վրա: Արաղչին ասել է. «Մենք առաջարկում ենք ԼՂ ճգնաժամի կարգավորման մեր ծրագիրը և սպասում ենք հակամարտության կողմերի պատասխանին»[94]:

Հոկտեմբերի 29-ին ԻԻՀ փոխարտգործնախարարը հանդիպել է նաև ՌԴ ԱԳ նախարարի տեղակալ Սերգեյ Ռյաբկովի հետ, ում հետ առավելապես քննարկվել են Իրանի միջուկային ծրագրի, մասնավորապես՝ Համատեղ գործողությունների համապարփակ ծրագրին (ՀԳՀԾ /

---

94 مذاکره دوم عراقچی در مسکو درباره قره باغ برگزار شد - ایرنا, ۸آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYmH .

JCPOA) առնչվող հարցեր: Մոսկվայից Երևան ուղևորման ընթացքում Արաղչին կրկնել է. «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման Թեհրանի ծրագիրը հիմնված է հումանիտար սկզբունքների, հակամարտող կողմերի ցանկությունների հիման վրա: Մենք առաջարկել ենք, սպասում ենք հակամարտող կողմերի պատասխանին»: Անդրադառնալով Մոսկվայում կայացած հանդիպումների արդյունավետությանը՝ նա հայտարարել է, որ Իրանն ու Ռուսաստանը նման մոտեցումներ ունեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում[95], որի մասին գրառում է կատարել նաև թվիթերյան օգտահաշվում[96]:

Իրանական կողմը շարունակել է զուգահեռաբար վստահեցնել հյուսիսային իր սահմանների վերահսկման և անվտանգ լինելու մասին: Այդ առումով հոկտեմբերի 29-ին հերթական հայտարարությամբ է հանդես եկել ԻԻՀ բանակի ցամաքային ուժերի հրամանատար Քիումարս Հեյդարին[97]:

Հոկտեմբերի 30-ին ԻԻՀ նախագահի հատուկ բանագնաց Արաղչին Ադրբեջանի և Ռուսաստանի պաշտոնատար անձանց հետ հանդիպումից և խորհրդակցությունից հետո ժամանել է Երևան: Հոկտեմբերի 29-ի լույս 30-ին Արաղչին Երևան ժամանելուն պես լրագրողների հետ հարցազրույցի ժամանակ ասել է. «Հիմա շատ զգայուն ժամանակ է և պետք է որքան հնարավոր է շուտ

---

[95] فرستاده ویژه ایران از مسکو به ایروان رفت - ایرنا , ۸آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYmW .

[96]Seyed Abbas Araghchi on Twitter: "Shared Iran's initiative with Andrey Rudenko, Deputy Foreign Minister of Russia, in a fruitful meeting today in Moscow. Iran and Russia share similar approaches towards Nagorno-Karabakh Conflict. Also had good discussion -as always - with Sergey Ryabkov on the future of JCPOA. https://t.co/099uCym1LZ" / Twitter

[97]No threat poses to Iran's borders: Army commander - IRNA English, Oct 29, 2020, https://en.irna.ir/news/84092625/No-threat-poses-to-Iran-s-borders-Army-commander.

որոշում կայացվի խաղաղություն հաստատման և խաղաղության ուղի բացելու համար»: ԻԻՀ նախագահի հատուկ բանագնացը, հավելելով, որ Իրանը գտնվում է երկու երկրների Ադրբեջանի և Հայաստանի հարևանությամբ, ասել է. «Երկու երկրների քաղաքացիներն էլ Իրանում խաղաղ ու հանգիստ ապրում են իրանցի հայրենակիցների կողքին, և մեր դիրքորոշումը միշտ եղել է հավասարակշռված և բալանսավորված դիրքորոշում»: Նախագահի հատուկ բանագնացը հավելել է. «Այս ճգնաժամում մենք համոզված և հավատարիմ ենք մի շարք միջազգային սկզբունքներին: Այն բարի կամքն ու կարողությունները, որոնք ունի Իրանը, կարող են կիրառվել խաղաղության ճանապարհի, հատկապես տևական խաղաղության համար»[98]:

Հանդիպմանն ԻԻՀ նախագահի հատուկ բանագնացը ՀՀ ԱԳ նախարարին է ներկայացրել ԼՂ տարածքում իրավիճակի հաղթահարման և հրադադարի հաստատման համար Իրանի առաջարկը և շեշտել, որ ԻԻՀ-ն ունի համագործակցության անհրաժեշտ կարողությունները: Հանդիպմանը երկու կողմերը մտահոգություն են հայտնել Մերձավոր Արևելքից տարածաշրջան միջազգային ահաբեկիչների տեղափոխման կապակցությամբ և այն համարել են լուրջ սպառնալիք ամբողջ տարածաշրջանի համար[99]:

Նույն օրը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ կայացած հանդիպման մասին ԻԻՀ

---

98 ۹آبان ۱۳۹۹, عراقچی: پیشنهاد ایران می‌تواند مسیر صلح را میان باکو و ایروان باز کند - ایرنا http://bitly.ws/RYo9 .

99 ۹آبان, عراقچی: رویکرد جمهوری اسلامی ایران برقراری آتش‌بس در قره‌باغ است - ایرنا ۱۳۹۹,http://bitly.ws/RYoH .

փոխարտգործնախարարը թվիթերյան գրառմամբ այն ներկայացրել է արդյունավետ և կառուցողական[100]:

Մոսկվայում և, հատկապես՝ Երևանում կայացած հանդիպումներից հետո նկատելի էր իրանական կողմի քաղաքական ակտիվության որոշակի նվազում՝ առաջարկի արդիական քննարկումների առումով, ինչը մի որոշ ժամանակ հետևողականորեն փորձ արվեց փոխակերպել ադրբեջանական և ռուսական ՁԼՄ-ներում արձագանքների և մեկնաբանությունների տեսքով: Այդ համատեքստում «ԻՌՆԱ»-ն հրապարակեց «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալությանը տված ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Արաղչիի հարցազրույցը[101], որում սակայն չէր արտահայտվում որևէ այլ նորություն, քան արդեն իսկ ներկայացված էր ավելի վաղ արված հաղորդագրություններում:

Ինչ վերաբերում է Արաղչիի Անկարայում ունեցած հանդիպմանը, հոկտեմբերի 31-ին կարճ հաղորդագրություն տարածվեց, որ նախորդ օրը երեկոյան հանդիպում է կայացել Թուրքիայի փոխարտգործնախարար Սեդաթ Օնալի հետ[102]: Մտերիմ և կառուցողական հանդիպման մասին թվիթերյան

---

[100]Seyed Abbas Araghchi on Twitter: "Today I had in depth discussion with H. E. Pashinyan, Prime Minister of Armenia, on Iran's Regional Initiative to Help in Ending the Nagorno-Karabakh Conflict. The meeting was fruitful and constructive. https://t.co/Jg46Ax85ph" / Twitter

[101]Иран готов выступить посредником в карабахском конфликте - РИА Новости, 30.10.2020, https://ria.ru/20201030/posrednik-1582286555.html. Regional realism; main feature of Iran's Karabakh initiative, Aragchi says - IRNA English, Oct 31, 2020, https://en.irna.ir/news/84093359/Regional-realism-main-feature-of-Iran-s-Karabakh-initiative.

[102] عراقچی با معاون وزیر خارجه ترکیه دیدار کرد - ایرنا, ۱۰آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYpQ .

գրառմամբ բնութագրում է տվել ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Արաղչին[103]:

Նոյեմբերի 1-ին ԼՂ հակամարտության կարգավորման իրանական առաջարկին է անդրադարձել ԻԻՀ ԱԳ նախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը[104]: Նա իրանական պետական հեռուստաալիքին տված հարցազրույցում, բառացիորեն ասել է. «Մենք Ղարաբաղի ճգնաժամի սկզբից տարածաշրջանի երկրների հետ խորհրդակցություններով, ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի ու Ռուսաստանի և Թուրքիայի հետ հետևել ենք ընթացքին, եղել այն համոզմունքին, որ ամենաշատ վնասներն այս պատերազմից կրում են տարածաշրջանի երկրները և կարելի է տարածաշրջանում ամենաշատ ազդեցությունն ունենալ պատերազմն ավարտելու համար, առանց մրցակցելու գոյություն ունեցող այլ մեխանիզմների հետ, ինչպես օրինակ ԵԱՀԿ Մինսկի խումբն է: Ցավոք անցած 30 տարիների ընթացքում բանակցությունների աշխատանքը արդյունք չի տվել, և ցավոք այս լարվածությունը մշտապես առկա է եղել ու այդ լարվածությունը մեր սահմանների մոտ է տեղի ունենում, և, ըստ էության, թե՛ երկու կողմերի քաղաքացիական անձինք,

---

[103]Seyed Abbas Araghchi on Twitter: "Frank and productive discussion with Deputy Foreign Minister Sedat Önal in Ankara. Iran and Turkey are two major players with undeniable role in peace and stability of the region. https://t.co/nYP4IBGxB3" / Twitter

[104]Zarif elaborates on Iran's peace plan for Nagorno-Karabakh conflict - IRNA English, Nov 1, 2020, https://en.irna.ir/news/84095018/Zarif-elaborates-on-Iran-s-peace-plan-for-Nagorno-Karabakh-conflict.

Зариф рассказал о деталях предложенного Ираном плана по урегулированию карабахского конфликта - IRNAРусский,

Զարիֆ.«Իրանը չի հանդուրժի ահաբեկիչների ներկայությունն իր սահմանների մոտ» - Pars Today- :

և թե՛ մեր ժողովուրդն է վտանգի ենթարկվել: Պարոն դոկտոր Արաղչին Իրանում քննարկված և պատկան մարմինների հաստատմանն արժանացած մի ծրագրով, սահմանային շրջաններ այցելելուց հետո մեկնել է Բաքու հանդիպել, մեր ծրագիրն է ներկայացրել տարբեր պաշտոնատարների և լավ բանակցություններ է ունեցել, այդ թվում՝ Ադրբեջանի նախագահի, Ռուսաստանում ԱԳՆ պաշտոնատարների, Երևանում՝ ևս տարբեր պաշտոնատարների, այդ թվում՝ վարչապետի և հետո էլ Թուրքիայում՝ իր թուրք գործընկերոջ հետ: Մեր ծրագրի կարևոր կետերը ժամանակավոր հրադադար չէ միայն, այլ ընթացք՝ դեպի կարգավորում՝ մի շարք սկզբունքների շրջանակների հիման վրա կողմերի պարտավորություններից սկսված որոշ գործողություններով, այդ թվում՝ զավթիչ ուժերի դուրս բերում բոլոր բռնազավթված տարածքներից, մարդկանց իրավունքների երաշխավորում, հաղորդակցության ուղիների ստեղծում և նման շարքի հարցեր, ինչպես նաև վերահսկողություն՝ տարածաշրջանի երկրների միջոցով: Այս ծրագիրն է ներկայացվել, սպասում ենք Ադրբեջանն ու Հայաստանը՝ հատկապես, ինչպես նաև իրենց տեսակետներն արտահայտեն Ռուսաստանի և Թուրքիայի գործընկերները»: Ի պատասխան տարածաշրջանում Իսլամական ծայրահեղական ուժերի ներկայության մասին հարցին՝ ԻԻՀ ԱԳ նախարարը նշել է. «Այո, ի վերջո ահաբեկչական ուժերի և, որ եթե նման ներկայություն լինի նաև սիոնիստների մասնակցությունը, իսկ ներկայիս բախումների ընթացքում եղած ահաբեկչական ուժերի ներկայության մասին գրեթե վստահ ենք, անպայման ընդգծել ենք, որ դա ոչ մեկի օգտին չէ: Բանակցությունների ընթացքում և բանակցություններից առաջ դա Ադրբեջանի, ինչպես նաև Ռուսաստանի ու Թուրքիայի պաշտոնատարների գիտությանն ենք

ներկայացրել, որ Իրանը նման բան չի հանդուրժի: Այժմ սահմանների մերձակայքում դրանք ներկայություն չունեն, սակայն այն հավանականությունը, որ հեռավորության վրա մեր սահմանների մոտ առկա լինեն շարունակում է բարձր մնալ, և մենք այդ մտահոգությունը լրջորեն հայտնել ենք կողմերին»[105]:

ԻԻՀ գերագույն առաջնորդի Արժեքների պահպանման և հրատարակման միջազգային գրասենյակի փոխտնօրեն Մոհսեն ՓաքԱյինը «Էթեմադ» օրաթերթի նոյեմբերի 1-ի հոդվածում նշել է. «Իրանի ծրագիրը տարբերվում է այլ երկրների ձախողված ծրագրերից և հիմնված է սկզբունքների վրա, որոնք, ի վերջո, կարող են բերել այդ ծրագրի հաջողությանը: Իրանի ծրագրի տարբերության պատճառը ուշադրությունն է ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի պահանջներին և ադրբեջանական ժողովրդի ու Ղարաբաղի տարածաշրջանի քաղաքացիների իրավունքների ընդգծումը»[106]:

Նոյեմբերի 2-ին ադրբեջանական «ITV»-ին տված հարցազրույցում ԻԻՀ փոխարտգործնախարար Արաղչին, անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության կարգավորման Իրանի առաջարկին, ասել է. «Իրատեսական և տարածաշրջանային մոտեցումը, տարածաշրջանի ազդեցիկ երկրների մասնակցությունը հակամարտության լուծման գործընթացին, Իրանի ծրագրի առանձնահատկություններն են: Իրանն այս ծրագրով առաջարկում է տարածաշրջանային համագործակցության միջոցով հասնել հակամարտության կարգավորմանը,

---

[105]Zarif defines details of Iran's initiative to establish peace in Nagorno-Karabakh, Nov 1, 2020, https://iranpress.com/content/29263/zarif-defines-details-iran-initiative-establish-peace-nagorno-karabakh.

[106] جامعیت طرح ایران در قرهباغ - ایرنا, ۱۱آبان۱۳۹۹, http://bitly.ws/R-Yrf .

ապահովելով կողմերի պահանջները»: Նա նաև նշել է. «Իրանի դիրքորոշումը մշտապես եղել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հարգելը, բռնազավթմանը վերջ տալը և գրավյալ տարածքների ազատագրումը: Վերջին 27 տարիների ընթացքում, այս դիրքորոշումը չի փոխվել»[107]:

Նոյեմբերի 2-ին ԻԻՀ ԱԳՆ խոսնակն իր շաբաթական մամլո ասուլիսի ընթացքում, որը կորոնավիրուսի համավարակի պատճառով առաջին անգամ անցկացվեց հեռավար տարբերակով, նշելով, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԻԻՀ ծրագիրը հիմնված է միջազգային իրավունքի մի շարք սկզբունքների վրա, ասել է. «Իրանը ծրագիր է ներկայացրել, որը հիմնված է միջազգային համակարգի, բռնազավթման վերացման, միջազգային վերահսկողության ընդունման և միջազգային սահմանների սկզբունքների վրա: Մենք ձգտում ենք կարգավորման, ոչ միայն հրադադարի»[108]: Նա նաև նշել է փոքրամասնությունների իրավունքների ընդունման մասին: Խոսնակն, ի պատասխան «ԻՌՆԱ»-ի հարցին, որ Զարիֆը նախօրեին արտահայտվել էր Իրանի հյուսիսային սահմաններում ահաբեկիչների ներկայության առնչությամբ և ղարաբաղյան հակամարտության կարգավորման տարածաշրջանային այցի ժամանակ Արաղչիի կողմից ներկայացված ծրագրի շրջանակներում խնդրին

---

[107]Аракчи: предложение Ирана может способствовать мирному урегулированию нагорно-карабахского конфликта – IRNAРусский, 2 нояб. 2020, http://bitly.ws/RYrZ.

Iran's initiative can help end Karabakh conflict: Deputy FM - IRNA English.

Արաղչի. Իրանի առաջարկը կարող է օգնել խաղաղ ճանապարհով լուծել ղարաբաղյան հակամարտությունը - Pars Today.

[108] طرح صلح قره باغ را در چهارچوب مصلحت‌های منطقه‌ای دنبال می‌کنیم - ایرنا ,۱۲آبان۱۳۹۹ , http://bitly.ws/RYsu.

անդրադառնալու մասին, ասել է. «Այդ հարցը ոչ միայն Բաքվին և Երևանին այլև այլ մայրաքաղաքներին էլ է ասվել: Այդ թեման մեր լուրջ մտահոգությունն է և դրա մասին լրջորեն խոսել ենք: Այդ հարցը հերքվել է, բայց մեր մտահոգությունը մնում է իր տեղում և մենք կատակ չունենք անելու որևէ մեկի հետ ու հուսով ենք, որ տեղեկությունները սխալ լինեն»[109]:

Մաս 3

Իրանական կողմի դիրքորոշման ձևավորում

Նոյեմբերի 3-ին ԻԻՀ գերագույն առաջնորդ Սեյեդ Ալի Խամենեին ուղիղ եթերով Մուհամմեդ մարգարեի ծննդյան օրվա կապակցությամբ շնորհավորական ուղերձում անդրադարձել է մի շարք ներքին և արտաքին քաղաքականության հարցերին, որի վերջին հատվածում Արցախյան պատերազմի մասին, շեշտելով, որ դա տարածաշրջանի անվտանգության դառը և սպառնացող իրադրություն է, ասել է. «Այս ռազմական բախումները պետք է հնարավորինս շուտ ավարտվեն. իհարկե, Հայաստանի միջոցով գրավված Ադրբեջանի բոլոր տարածքները պետք է ազատվեն և վերադարձվեն Ադրբեջանին»: Այաթոլլա Խամենեին նաև շեշտել է այդ տարածքներում հայերի անվտանգության պահպանման և երկու կողմերից միջազգային սահմանները հարգելու անհրաժեշտության մասին և ավելացրել. «Ահաբեկիչները, որոնք ըստ վստահելի

---

109 خطیب‌زاده: طرح صلح قره باغ را در چهارچوب مصلحت‌های منطقه‌ای دنبال می‌کنیم - ایرنا, ۱۲آبان۱۳۹۹,http://bitly.ws/RYt2.

տեղեկատվության մուտք են գործել տարածաշրջան չպետք է ոչ մի դեպքում մոտենան Իրանի սահմանին և եթե նրանք սահմանին մոտենան վստահաբար կտրուկ միջոցներ կձեռնարկվեն»[110]:

Նույն օրը «ԻՌՆԱ»-ի հետ զրույցում ԻԻՀ բանակի ցամաքային ուժերի հրամանատար Քիումարս Հեյդարին, ի նկատի առնելով Ադրբեջանի և Հայաստանի բախումների հարցը Իրանի հյուսիս-արևմտյան սահմաններում, բանակի պատրաստվածության մասին ասել է. «Երկու անգամ այցելել եմ Խոդաֆարինի սահման, Ղարաբաղ և Արաքսի ափ, որտեղ մենք տարածքային գործողություններ ենք կատարում: Սահմանների այն կողմն էլ ամբողջությամբ դիտարկում ենք: Ուժերը, որոնք տեղակայելու ենք, տեղակայել ենք ու, որ անհրաժեշտություն լինի կամրապնդենք»: Բանակի ցամաքային ուժերի հրամանատարն, ընդգծելով, որ բազմիցս է նշվել Իրանի կարմիր գծի՝ ժողովրդի անվտանգության, հարմարավետության ու բարեկեցության մասին, ասել է. «Մեր մյուս կարմիր գիծն այն է, որ չենք ընդունելու տարածաշրջանի աշխարհաքաղաքական ոչ մի փոփոխություն»[111]:

Նոյեմբերի 3-ին Ադրբեջանում ԻԻՀ նախկին դեսպան Մոհսեն ՓաքԱյինը, մեկնաբանելով ԻԻՀ առաջնորդի հայտարարությունն, «ԻՌՆԱ»-ին ասել է. «Հեղափոխության գերագույն առաջնորդի արտահայտությունները

---

110 رهبر انقلاب: امروز آمریکا همان فرعون مصر است/ هر کس رییس جمهور آمریکا شود بر سیاست ما تاثیر ندارد - ایرنا, ۱۳آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYti.
, سخنرانی تلویزیونی رهبر انقلاب بەمناسبت سالروز ولادت پیامبر اعظم(ص) و امام صادق(ع) , https://farsi.khamenei.ir/news-content?id=46766. ۱۳/۰۸/۱۳۹۹

111 امیرحیدری: خط قرمز ما امنیت ملی، آسایش و تامین رفاه مردم است - ایرنا, ۱۳آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYuj.

ղարաբաղյան հակամարտության մասին միջազգայնորեն ընդունված սկզբունքների արտահայտումն էին և հիմնված էին իսլամական ու մարդասիրական սկզբունքների վրա»: Նա նաև նշել է. «Տարածքների բռնազավթումն այսօր ոչ ոք չի ընդունում, և այն երկիրը, որի տարածքը բռնազավթված է, իրավունք ունի պայքարելու և կռվելու իր գրավյալ տարածքների ազատագրման համար… Մեր փորձով էլ, որ պարտադրված պատերազմի ժամանակ (Իրան-իրաքյան պատերազմ – Վ. Ա.) ունեցանք և մեր տարածքներն էլ գրավեցին, իրավունք ունեինք կռվելու՝ բռնազավթմանը վերջ տալու համար, և այդ պատճառով մենք այժմ այդ իրավունքը տալիս ենք Ադրբեջանին: Պատերազմը դառը բան է, և հուսով ենք, որ այս պատերազմը հնարավորինս շուտ կավարտվի, և ականատես կլինենք անվտանգության ստեղծմանն ԻԻՀ հյուսիսային սահմաններում: Հայերի իրավունքների մասին առաջնորդի արտահայտած մտքերի հետ կապված ՓաքԱյինն ասել է. «Ղարաբաղը հայերով բնակեցված տարածք է՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ներքո: Առաջնորդն էլ անդրադարձել է թե՛ Ադրբեջանի՝ իրենց հայրենիքը պաշտպանելու իրավունքներին, և թե՛ կոչ արել այդ երկրին պահպանել Ղարաբաղում հայերի իրավունքները»: Նա, նշելով, որ այս հարցը շատ ընդգրկուն և ուղենիշային էր ԻԻՀ պաշտոնյաների համար, որպեսզի գործեն այդ շրջանակներում, պարզաբանել է. «Ղարաբաղի հիմնախնդրի հետ կապված Իրանի պլանն էլ, որը վերջերս պարոն Արաղչիի կողմից ներկայացվեց Ադրբեջանին և Հայաստանին այդ սկզբունքներին էր ուշադրություն դարձնում: Հուսով եմ, որ ապագայում Իսլամական հեղափոխության առաջնորդի արծարծված սկզբունքները կկիրառվեն և ուշադրության կարժանանան ԱԳՆ

պաշտոնյաների և համակարգի այլ բարձրաստիճան պաշտոնատարների, ինչպես նաև ՁԼՄ-ների կողմից»: Ահաբեկիչների թեմային անդրադառնալով՝ ՓաքԱյինը մեկնաբանել է. «Ոչ բարենպաստ բանը, որ պատահել է Ադրբեջանի և Հայաստանի պատերազմի պարագայում, այն է, որ տարածաշրջանի որոշ երկրներ խրախուսել են թաքֆիրականներին ներկա գտնվել այս տարածաշրջանում և մասնակցել հակամարտությանը: Իհարկե, այս երկրները հերքում են դա, բայց ապացույցները ցույց են տալիս, որ թաքֆիրականները ներկա են տարածաշրջանում և նույնիսկ տեսանյութեր են հրապարակվել պատերազմական գոտիներում նրանց ներկայության մասին համացանցում: Եթե որևէ մեկը ուզենա, որ սրանից հետո Սիրիայից ու Իրաքից թաքֆիրականներին վտարելուց հետո այլ տեղ գնան, իսկ այդ երկիրն էլ օգնի այդ տարածքներում հաստատվել թաքֆիրականներին, հաստատ սխալված կլինի»[112]:

Այստեղ հատկանշական է, որ նոյեմբերի 3-4-ը իրանական մամուլը տարածել է ԻԻՀ առաջնորդի խոսքերի վերաբերյալ արձագանքներն ու մեկնաբանությունները՝ Թուրքիայի, Իրաքի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Պակիստանի մամուլի էջերում: Առհասարակ, պետք է նշել նաև, որ Իրանի փաստացի ղեկավարի խոսքերն աննախադեպ էին ԼՂ հակամարտության վերաբերյալ: Այսինքն նման կերպ և ուղիղ մեկնաբանությամբ Իրանի ղեկավարը մինչ այժմ որևէ կերպ չէր արտահայտվել խնդրի մասին, ինչն էլ հստակ ուղենիշ և քարոզչական առումով բավականաչափ կարևորություն ունեցավ իրանական կողմի համար:

---

112 بیانات رهبر انقلاب درباره قره باغ بیان اصول پذیرفته شده بین المللی بود - ایرنا ۱۳آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYuI.

Իրանի առաջնորդի խոսքերից հետո հաջորդ օրվա՝ նոյեմբերի 4-ի ԻԻՀ կառավարության նիստին նախագահ Հասան Ռոհանին ևս անդրադարձել է պատերազմական գործողություններին[113]: ԻԻՀ նախագահի պաշտոնական կայքի պարսկերեն բաժնում ներկայացված Ռոհանիի խոսքերի ամբողջական տեքստի համաձայն՝ նա բառացիորեն ասել է. «Մեկ այլ կետ, որը ես ուզում եմ շեշտել, տարածաշրջանի իրավիճակն է և հյուսիսային ու հյուսիս-արևմտյան սահմանները: Գիտեք, Իրանի երկու հարևանները գտնվում են ռազմական բախման մեջ: Մոտավորապես մեհր (իրանական արեգակնային տոմարով պետական օրացույցի 7-րդ ամիսը՝ սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 21-ը - Վ. Ա.) ամսի սկզբներին են սկսվել այդ բախումները և դեռևս շարունակվում են: Արտգործնախարարությունն այս ոլորտում ակտիվ էր, զինված ուժերը լիովին ուշադիր կենտրոնացած էին սահմանների անվտանգության համար, լավագույնս նաև վերահսկել են և պլանավորել են: Սահմանների անվտանգությունը կարևորություն ունի, քանի որ ահաբեկիչները և ահաբեկչական խմբավորումները պետք է ոչ մի կերպ ներկայություն չունենան Իրանի սահմանների մոտ, այն որ աշխարհագրական սահմանները չփոխվեն մեզ համար կարևորություն ունի, և այն որ ազգերի իրավունքները պահպանվեն: Իհարկե, տարածքային ամբողջականությունն այս տարածաշրջանի ազգերի իրավունքն է, Ադրբեջանի իրավունքն է, սակայն մեր սիրտն ուզում է իրենց այդ

[113]Despite difficulties, hardships, export and import of essentials boost/ I assure people that country's essential needs will be supplied/ We don't care what happens in US and who's elected/ Our planning, decisions for development adopted no matter what happens in US, 2020/11/04, https://president.ir/en/118034.

իրավունքներին հասնեն քաղաքական և ոչ պատերազմի ճանապարհով, բայց միևնույն ժամանակ, այդ հիմնական կետերն Իրանի համար կարևոր են: Այդ բոլոր երկրներին ասվել է, փոխանցվել է, արտգործնախարարությունն էլ բախումների դադարեցման և խաղաղության համար շատ լավ ծրագիր է կազմել»[114]:

Նոյեմբերի 4-ին «ԻՌՆԱ»-ն հանդես է եկել «Գերագույն առաջնորդի հայտարարությունները Ղարաբաղի պատերազմի վերաբերյալ. այլևս պատրվակ բերելու տեղ չկա» վերտառությամբ հոդվածով, որում նշվել է. «Սա ամբողջովին լուրջ մի ուղերձ էր, որ Ղարաբաղի պատերազմի ճգնաժամի կողմերը պետք է ուշադրություն դարձնեն և օգտվեն այս գործնական ու բարեբեր լուծումից և Իրանի խաղաղության նախաձեռնությունում ստեղծված հնարավորությունից: Առաջնորդը հստակ շեշտել է, որ գրավյալ բոլոր տարածքները պետք է թողնվեն և հանձնվեն Ադրբեջանի Հանրապետությանը: Այս հատվածը պարունակում է անհերքելի իրողություն և հիմնական կետ ցանկացած խաղաղության նախաձեռնության մեջ, որն ուղղված է ճգնաժամին վերջ դնելուն: Երևանը պետք է դա հասկանա, որ բռնազավթումը շարունակելն իրեն ձեռնտու չէ, քանի որ փաստացի օկուպացիայի ցանկացած տեսակ թե՛ դատապարտելի է, և թե՛ վարկաբեկիչ, և ուշ թե շուտ ստիպված կլինի վերադառնալ միջազգային սահմանների հետնամաս, գուցե ավելի բարձր գնով: Մյուս կողմից, Ղարաբաղի ճգնաժամի շարունակությունը, ինչն Ադրբեջանի տարածքների բռնազավթման շարունակման առաջացումն է,

---

[114] برغم مشکلات و سختی ها شاهد افزایش در صادرات و واردات کالای مورد نیاز هستیم/ مردم نسبت به تامین کالاهای اساسی مورد نیاز کشور مطمئن باشند/ برای ما مهم نیست در آمریکا چه می گذرد و چه کسی انتخاب می شود/ برنامه ریزی و تصمیمات برای توسعه کشور بدون توجه به اینکه در آمریکا چه اتفاقی می افتد، اتخاذ شده است/ اساس حکومت پیامبر اکرم (ص) بر مبنای اخلاق، مهربانی، تواضع و مشورت با مردم بود, 14 آبان 1399

կարող է ամեն կողմից ահաբեկիչների և միջնորդավորվածների դուռ բացել դեպի Կովկաս, և պատրվակ կդառնա սիոնիստների ազդեցության տարածման ու ընդլայնման համար տարածաշրջանում, որն ընդունելի չէ, և Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդն իր խոսքի մեկ այլ մասում շեշտել է այդ մասին: Հետևաբար, այս իրավիճակի շարունակումը, որը կնպաստի տարածաշրջանում անապահովությանն ու անկայունությանը, հեռու չի մնա ԻԻՀ դիտանկյունից, և, համապատասխանաբար, ցանկացած կողմ, որը կօգնի շարունակել այս իրավիճակը, պետք է ընդունի այդ վճարների պատասխանատվությունը: Մեկ այլ ուղերձ էլ, որ ստանում ենք գերագույն առաջնորդի խոսքերում, նրա ընդգծումն էր Ղարաբաղի հայ բնակչության անվտանգության ապահովման վրա, որը ևս թե՛ մարդասիրական, թե՛ կրոնական և կանոնական տեսանկյունից կայուն խաղաղության պահանջներից է և խաղաղության բանակցային գործընթացում կարող է այն երաշխավորվել. իհարկե, Բաքվի պաշտոնյաներն ավելի վաղ հավաստիացումներ են տվել սրա վերաբերյալ, քանի որ շիայական կրոնահավատալիքային ուսմունքները պարսավում և արգելում են փոքրամասնությունների դեմ ցանկացած հարձակում: Ղարաբաղի ճգնաժամի նախապատմությանն աչքի անցկացումը ցույց է տալիս, որ ճգնաժամի երկարացման հիմնական և սկզբունքային պատճառը տարածաշրջանից դուրս դերակատարների և միջնորդների դերն է եղել: Հայաստանը 90-ականների սկզբին Խորհրդային Միության փլուզման հետևանքով առաջացած իրարանցման անցուդարձերում, Ղարաբաղն ապօրինի անջատելով Ադրբեջանից, քայլեր ձեռնարկեց նաև այդ երկրի տարածքներից որոշ մասերի բռնազավթման

ուղղությամբ, որ հենց սկզբից միջազգային հանրությունը դրա դեմ բացասաբար արձագանք ցույց տվեց և Երևանին ստիպեց դադարեցնել օկուպացիան, սակայն նույն տարիներին Ղարաբաղի փաթեթն ընկավ այն դերակատարների ձեռքը, ովքեր գործնականում ցույց տվեցին, որ ցանկություն չունեին վերջ տալու ճգնաժամը: Նախորդ դարի 90-ականների սկզբին ճգնաժամի մեկնարկում ԻԻՀ-ն իր ողջ կարողությամբ կանխելու համար Հայաստանի բանակի առաջխաղացումներն ու Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվին ուղղված վտանգը շտապեց օգնության հասնել այդ երկրին և աջակցություն ցուցաբերեց հազարավոր տեղահանված ադրբեջանցիներին ու այնուհետ ճգնաժամը վերացնելու դիվանագիտական ակտիվություն մտցրեց օրակարգ, սակայն ներգրավված կողմերը կապվեցին տարածաշրջանից դուրս գտնվող ուժերին: Այժմ, երբ ճգնաժամի «թարախակույտն» այս տարվա ամռանից կրկին պայթել է, ԻԻՀ-ն կրկին գործի է անցել՝ ներկայացնելով Ղարաբաղում պատերազմը դադարեցնելու գործողությունների ծրագիր: Այս շաբաթ և ի շարունակություն Ղարաբաղի համար Իրանի խաղաղության նախաձեռնությանը հակամարտող կողմերին և տարածաշրջանի դերակատարներին առաջարկային փաթեթ ներկայացվեց մեր երկրի ԱԳ փոխնախարար Աբբաս Արաղչիի միջոցով: Հեղափոխության գերագույն առաջնորդն էլ հստակ և թափանցիկ կերպով և ամբողջությամբ հասկանալի, գործնական և իրական լուծում է ներկայացրել, որը և՛ արդար, և՛ իմաստալից է, և եթե հակամարտող կողմերը չլինեն տարածաշրջանից դուրս գտնվող ուժերի ազդեցության տակ և ազնիվ լինեն, չեն շեղվի դրանից…»[115]:

---

[115] بیانات مقام معظم رهبری در خصوص جنگ قره‌باغ؛ دیگر جای بهانه نیست - ایرنا ۱۴آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYvN .

Նոյեմբերի 5-ին ԻԻՀ բանիմացների խորհրդի անդամ, Մարաղեի ուրբաթօրյա աղոթապետ, այաթոլլա Մոհամմադթաղի Փուրմոհամմադին նշելով, որ սահմանամերձ շրջաններում ԻԻՀ ԶՈւ ստորաբաժանումների առկայությունն իսլամական համակարգի ուժի մի մասն է կազմում, ասել է. «Զինված ուժերը պատրաստ են իսլամական հայրենիքի շահերի և սահմանների դեմ ցանկացած սպառնալիքի»: Նա Մարաղեի 11-րդ հրետանային ջոկատի էլիտար ստորաբաժանումների դեպի հյուսիս-արևմտյան սահմանային շրջաններ ճանապարհելու արարողությանն ասել է. «Մեր երկրի սահմանների մյուս կողմում մի շարք թաքֆիրականների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Սիոնիստական ռեժիմի ու նրանց հարողների ներկայությունից վախ ու երկյուղ չունենք»: Նա ավելացրել է. «Հենց այս պահին Ղարաբաղի շրջանում հակամարտող կողմերից մեր երկրին վտանգ չի սպառնում, սակայն զինված ուժերը, ներառյալ բանակը, ԻՀՊԿ-ն, ոստիկանությունն ու սահմանապահները պատրաստ են պատասխանել ցանկացած ագրեսիայի կամ սպառնալիքի»: Անդրադառնալով գերագույն առաջնորդի խոսքերին ԼՂ տարածքի վերաբերյալ՝ Փուրմոհամմադին ավելացրել է. «Ըստ նրա մեկնաբանության, անհրաժեշտություն է հակամարտող կողմերի վերադարձն օրինական սահմաններին և նաև Ղարաբաղի գրավյալ տարածքների վերադարձը՝ համաձայն միջազգային իրավունքի և պայմանագրերի»[116]:

Ինչպես ակնկալվում էր ԻԻՀ առաջնորդի մեկնաբանություններից հետո առաջիկա ուրբաթօրյա քարոզների ժամանակ գրեթե բոլոր աղոթապետերն,

---

[116] ۱۵آبان۱۳۹۹,حضور نیروهای مسلح در مناطق مرزی نمایش قدرت نظام اسلامی است - ایرنا , http://bitly.ws/RYw2 .

անդրադառնալով, մեջբերել են նրա խոսքերը, որի հետ զուգահեռաբար ընթանում էին զինուժի սահմանային համալրումները:

Նոյեմբերի 5-ին ԻՀՊԿ գլխավոր հրամանատար Հոսեյն Սալամին դիտարկումներ է անցկացրել ԼՂ հակամարտության գոտուն հարող Իրանի հյուսիս-արևմտյան սահմաններում: Ստուգայցի ընթացքում նրան է զեկուցվել Իրանի հետ Ադրբեջանի և Հայաստանի սահմանագծի երկայնքով վերջին իրավիճակը, որի ժամանակ գեներալ Սալամին ասել է, որ Իրանի համար կարմիր գիծ է համարվում կայուն անվտանգությունը: Նա նաև նշել է, որ Իրանը երբեք չի հանդուրժի ցանկացած տեսակի անապահովություն, որը կարող է սպառնալ սահմանային շրջաններում իր քաղաքացիների անվտանգությանն ու հանդարտությանը: Միաժամանակ նշվել է նաև, որ Իրանի համար օրակարգային առաջնահերթություն է երկրի անվտանգության և պաշտպանության կարողությունների ամրապնդումն ու սահմանամերձ տարածքներում մշտարթուն ներկայությունը[117]:

Հաջորդիվ գրեթե նույնաբովանդակ հայտարարությամբ է հանդես եկել նաև ԻԻՀ բանակի ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ Քիումարս Հեյդարին՝ հերթական անգամ ընդգծելով. «Տարածաշրջանի աշխարհաքաղաքականության պահպանումը մեր հարգանքի արժանի և կարմիր գիծն է, և ոչ մի ուժ չպետք է ձգտի փոխել տարածաշրջանի աշխարհագրությունը, և մենք այս հարցում չենք հանդուրժի»: Բանակի ցամաքային ուժերի

---

[117]IRGC commander inspects borders close to Nagorno-Karabakh conflict zone - IRNA English, Nov 5, 2020,https://en.irna.ir/news/84100078/IRGC-commander-inspects-borders-close-to-Nagorno-Karabakh-conflict.

հրամանատարն, ընդգծելով տարածաշրջանի երկրների տարածքային ամբողջականությունը հարգելու անհրաժեշտությունը, նշել է. «Մենք երկու հարևան երկրների հետ էլ շատ ընդհանրություններ ունենք և մեր խորհուրդն է երկու երկրներին հարգել միջազգային օրենքները, պահպանել միջազգային սահմանները և լուծել խնդիրները երկխոսության և բանակցությունների միջոցով»[118]:

Նոյեմբերի 6-ին ԻԻՀ ԱԳ նախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը Լատինական Ամերիկա կատարած այցի շրջանակներում վենեսուելական «teleSUR» լրատվականին տված հարցազրույցում[119], պատասխանելով ԼՂ ընթացող հակամարտության վերաբերյալ հարցին, նշել է, որ այն տեղի է ունենում Իրանի սահմանների մոտ և իրանական կողմը հստակորեն հայտարարել է, որ տարածքների բռնազավթումն անթույլատրելի է և անընդունելի է միջազգայնորեն ճանաչված սահմանների փոփոխումը, իսկ ադրբեջանական գրավյալ տարածքները պետք է վերադարձվեն: Միևնույն ժամանակ, ըստ ԻԻՀ ԱԳ նախարարի, իրանական կողմը մտահոգված է մարդկային, քաղաքացիական կորուստների, ինչպես նաև բերված ահաբեկչական խմբավորումների որպես վարձկաններ ներկայության առնչությամբ, ինչը սպառնալիք է հանդիսանում ոչ միայն Իրանի, այլև ողջ տարածաշրջանի համար: Նա, պատասխանելով իրանական կողմի միջնորդության վերաբերյալ հարցին, նշել է Արաղչիի այցելությունների և առաջարկի ներկայացման մասին, ինչը

---

118 امیر حیدری: هیچ خطری مرزهای کشور را تهدید نمی‌کند - ایرنا ۱۶آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYwV .

119 Ministry of Foreign Affairs of the Islamic Republic of Iran- Videos: Dr. Zarif's interview with Venezuela's television network teleSUR (mfa.ir), https://en.mfa.ir/portal/play/14475.

քննարկվում է կողմերում, ինչպես նաև Ռուսաստանի և Թուրքիայի կողմից:

Նոյեմբերի 7-ին «ԻՌՆԱ»-ի մեկ այլ՝ «Ղարաբաղի խաղաղության համար Իրանի կայուն ջանքերը» վերտառությամբ հոդվածում նշվում էր պատերազմի ընթացքում հրադադարի երեք փորձերի և իրանական նախաձեռնության մասին: Վերջինի հետ կապված նշվում էր նաև, որ թեև հայտնի չեն մանրամասները, բայց տարածքների պատկանելության հարցը պարզ է, որի հետ կապված ՄԱԿ-ի անդամ ԻԻՀ-ն սատարել է չորս պարտադիր ու երկու խորհրդատվական բանաձևերին ու միշտ էլ պնդել տարածքները հետ վերադարձնելու վերաբերյալ իր անփոփոխ դիրքորոշումը: Նշվել է նաև, որ հիմնական բնակիչներ համարվող ադրբեջանցիները վտարվել են այդ շրջաններից և ԻԻՀ-ն էլ իր հայեցակարգով դեմ է անջատողականությանն ու տարածքների բռնակցմանը մեկ այլ երկրին: Իսկ խնդրի երեսուն տարվա սառեցումը ցույց է տվել, որ հնարավոր չի կարճաժամկետ լուծումներ ապահովել: Առաջնորդն էլ հստակ և պարզորոշ ներկայացրել է լուծման ճանապարհը, հակառակ դեպքում օտար ուժերն են ներթափանցելու ու նոր ոճրագործություններ են առաջացնելու, մինչդեռ կողմերը պիտի թողնեն էմոցիաները ու կայուն խաղաղության հաստատման համար լսեն տարածաշրջանի երկրներին, ինչպիսիք են Ռուսաստանն ու Թուրքիան[120]:

Նոյեմբերի 7-ին ԻԻՀ ԶՈՒ ԳՇ միացյալ հրամանատարության խոսնակը հայտարարել է, որ թաքֆիրականների ոտքը չպետք է որևէ կերպ բացվի ղարաբաղյան հակամարտության գոտում: Նա նշել է, որ

---

[120] تلاش پایدار ایران برای صلح در قره باغ - ایرنا, ۱۷آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYxK .

իրանական կողմը թույլ չի տա Սիոնիստական ռեժիմի բազաներ հիմնվեն իր սահմանների մոտ: «Mizan» լրատվականին տված հարցազրույցում զորապետ Աբոլֆազլ Շեքարչին, անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ԻԻՀ առաջնորդի մեկնաբանություններին, ասել է. «Գերագույն առաջնորդն ընդգծել է Հայաստանի կողմից Ադրբեջանի գրավյալ տարածքների ետ վերադարձնելու մասին, ԻԻՀ-ն հուսով է, որ այդ կարևորությունն իրականացվի երկխոսության ճանապարհով, և երկու երկրների մարդկանց կյանքն ու ունեցվածքը հարձակման չենթարկվի պատերազմի միջոցով»: Շեքարչին ավելացրել է. «Նրանով հանդերձ, որ երկու երկրներն էլ հարևաններ ենք ընդունում և հարգում ենք ղարաբաղյան հակամարտության երկու երկրներին էլ, միևնույն ժամանակ ընդգծում ենք գրավյալ տարածքների ազատագրումը, մեկ այլ հանգամանք է այն, որ հոգ տարվի այնտեղի մարդկանց նկատմամբ, որոնք հայերն են՝ չտուժեն, հատկապես մահմեդական տարածքներում ապրող հայերը»: ՀՈՒ գլխավոր խոսնակը հստակեցրել է. «Քանի որ ԻԻՀ-ն համատեղ սահմաններ ունի Ադրբեջանի ու Հայաստանի հետ և ԻԻՀ համար առաջնային է սահմանային գծերի և սահմանաբնակների անվտանգությունը, երկու երկրները պետք է շատ զգույշ լինեն, որ ԻԻՀ հանդեպ ամենափոքր հարձակումը կտրուկ արձագանքի կարժանանա»[121]:

Նոյեմբերի 9-ին ԻԻՀ ԱԳՆ խոսնակ Սաիդ Խաթիբզադեն, անդրադառնալով Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող ԼՂ հակամարտության բախումներին, նշել է, որ Իրանը ողջունում է

---

[121] سخنگوی ارشد نیروهای مسلح: پای تکفیری‌ها نباید به هیچ عنوان در منطقه مناقشه قره‌باغ باز شود|اجازه نمی‌دهیم پایگاه‌های رژیم صهیونیستی در نزدیکی مرزهای ما ایجاد شود ,۱۷آبان ۱۳۹۹, http://bitly.ws/RYyo .

հակամարտությունը դադարեցնելու ցանկացած նախաձեռնություն: Պատասխանելով հակամարտության կարգավորման Իրանի ծրագրի մասին՝ խոսնակը նշել է, որ հակամարտության լուծման շրջանակը հստակ է: Նույն հաղորդագրության պարսկերեն բաժնում ավելացված է նաև սահմանների պահպանման, գրավյալ շրջանների հարցի լուծման, տարածաշրջանի ժողովրդագրության անփոփոխ պահպանման մասին[122]: Ըստ նրա՝ երեսուն տարվա ճգնաժամն իրանական կողմը չի ակնկալում, որ երկու-երեք շաբաթում կլուծվի: Նա հավելել է, որ Իրանը ողջունել է տվյալ շրջանակներում հակամարտության կարգավորման ցանկացած տարբերակ[123]:

Նույն օրը ԻԻՀ բանակի հասարակայնության հետ կապերի վարչության տեղեկատվության համաձայն՝ բրիգադային գեներալ Ալիաքբար Աբբաս Թաջադոդը հայտարարել է. «ՀՕՊ արագ արձագանքման հյուսիսային ստորաբաժանումը ԻԻՀ օդային տարածքի կայուն անվտանգությունը դիտարկելու, պաշտպանելու, ինչպես նաև հյուսիս-արևմտյան ուժերն ամրապնդելու նպատակով տեղակայվել է այս ուղղությամբ»[124]:

Իր հերթին «Խաթամ ալ-Անբիյա» ՀՕՊ (ԻՀՊԿ և բանակի միավորված) հրամանատարական շտաբի պետի տեղակալ, գեներալ Ղադեր Ռահիմզադեն, նոյեմբերի 9-ին այցելելով Փարսաբադ և Ասլանդուզ, ասել է, որ այնտեղ

---

[122] اركان كلان نظام درباره سياست خارجى تصميم‌گيرى مى‌كنند/ تماسى با تيم بايدن نداشتيم - ايرنا, ۱۹آبان۱۳۹۹ , http://bitly.ws/RYyQ .

[123] Iran says region needs regional mechanism for security - IRNA English, Nov 9, 2020, https://en.irna.ir/news/84104180/Iran-says-region-needs-regional-mechanism-for-security.

[124] يگان واكنش سريع پدافند هوايى شمال به نواحى مرزى شمال غرب اعزام شدند - ايرنا, ۱۹آبان۱۳۹۹ , http://bitly.ws/RYzn .

գտնվող ԻՀՊԿ և բանակի ՀՕՊ ստորաբաժանումներն ու տեխնիկան իրականացնում են 24-ժամյա հսկողություն[125]:

Քաղաքական առումով հատկանշական է, որ նոյեմբերի 9-ին արտահայտվել է նաև «Իսլամական դաշինք» կուսակցության գլխավոր քարտուղար Ասադոլլա Բադամչիանը, ով ԼՂ զարգացումների մասին ասել է. «Լուծման ուղին պատերազմում չէ, այլ միջազգային սկզբունքների և ազգերի ու երկրների իրավունքների պահպանման մեջ»: Նա նշել է, որ «թափանցիկ կերպով ներկայացվել է Ղարաբաղի հակամարտության լուծման ուղիները. նախ՝ գրավյալ տարածքները պետք է վերադարձվեն իրենց տերերին և Ղարաբաղը տրվի Ադրբեջանին: Երկրորդ, այս հողերում պետք է հարգվեն ու պահպանվեն հայ ժողովրդի իրավունքները և բոլորի համար պետք է հաստատվի լիարժեք անվտանգություն: Երրորդ՝ միջազգային սահմանները պետք է պաշտպանված լինեն ագրեսիայից, և չորրորդ՝ տարածաշրջանային խաղաղությունը պահպանելու համար պետք է դադարեցվի այն կառավարությունների միջամտությունը, որոնք ահաբեկիչներ են բերել տարածաշրջան»[126]:

Նույն օրը Ադրբեջանում ԻԻՀ դեսպան Սեյեդ Աբբաս Մուսավին ասել է. «Բռնազավթումն ու անջատողականությունը կարմիր գիծ է ԻԻՀ համար և միշտ դրա մասին շեշտվել է»: ԻԻՀ դեսպանը իրանական կից հաստատությունների պատասխանատուների հետ միասին Ադրբեջանի դրոշի օրը Բաքվի նահատակների ճեմուղում կայացած արարողությանը հարգանքի տուրք է մատուցել

---

125 ایرنا - قاطعانه با نقض‌کنندگان مرزهای کشور برخورد خواهیم کرد, ۱۹آبان۱۳۹۹ , http://bitly.ws/RYzz .

126 ایرنا - بادامچیان: انتخابات آمریکا، پایان غرب‌زدگی در ایران است, ۱۹آبان۱۳۹۹ , http://bitly.ws/RYzV .

Ադրբեջանի և ԻԻՀ ազգային դրոշներին և ծաղիկներ տեղադրել: Արարողության ժամանակ լրագրողների հետ զրույցում Մուսավին, ասելով, որ ԻԻՀ-ն ամենաբարձր մակարդակով թե՛ հոչակագրային, թե՛ գործողության միջոցով կանգնած է Ադրբեջանի կառավարության և ժողովրդի կողքին և կշարունակի իր այդ աջակցությունը, ավելացրել է. «Հուսով եմ գրավված բոլոր տարածքների ազատագրմամբ ականատես կլինենք միասնական, միավորված ու մեծ Ադրբեջանի, իսկ երկու երկրները՝ Իրանն ու Ադրբեջանը խաղաղությամբ և բարեկամությամբ հասնեն համագործակցության գագաթնակետին»: ԻԻՀ դեսպանը հավելել է. «Մենք համոզված ենք, որ Ղարաբաղի բոլոր գրավյալ տարածքները, ինչպես գերագույն առաջնորդն է ասել, պետք է վերադարձվեն Ադրբեջանին, և, իհարկե, շատ լավ կլիներ, որ այդ հողերը վերադարձվեին խաղաղությամբ և երկխոսությամբ»[127]:

Նոյեմբերի 10-ին ԻԻՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Մահմուդ Վաեզին իր թվիթերյան գրառման մեջ նշել է. «ԻԻՀ-ն ողջունում է Ռուսաստանի միջնորդությունը Ադրբեջանի և Հայաստանի միջև, և կողմերի միջոցով Ղարաբաղի հակամարտությունում հրադադարի հաստատումը: Մենք շարունակում ենք ընդգծել երկու երկրների կողմից միջազգային սահմաններին հավատարիմ լինելն ու բոլոր քաղաքացիական անձանց իրավունքների պահպանումը»[128]: Նա նաև մեկ այլ գրառմամբ ավելացրել է. «Համոզված ենք, որ հակամարտության երկու կողմերը

---

[127] سفیر ایران در باکو: اشغالگری و تجزیه طلبی خط قرمز برای ایران است – ایرنا, ۱۹آبان۱۳۹۹ , http://bitly.ws/RYAk .

[128] Mahmoud Vaezi on Twitter: " جمهوري اسلامي ايران از ميانجگيري روسيه، ميان آذربايجان و ارمنستان و پذيرش آتش‌بس از سوي طرفين در #مناقشه_قره‌باغ استقبال مي‌كند. ما همچنان به پايبندي دو كشور به مرزهاي بين‌المللي و حفظ حقوق شهروندي همه اقشار تاكيد داريم." / Twitter

հանձնառու մնան միջազգային նորմերին, ներառյալ երկրների տարածքային ամբողջականությանն ու իրենց քաղաքացիների իրավունքներին, բանակցությունները և քաղաքական լուծումը կարող են վերջ դնել այս դարավոր ճգնաժամին: Ուրախ լինելով պատերազմի ավարտով, հուսով ենք, որ կիրականացվի հրադադարի մասին ձեռք բերված պայմանավորվածությունը»[129]:

Նոյեմբերի 10-ին նաև հայտարարություն է տարածել ԻԻՀ ԱԳՆ-ն՝ հետևյալ բովանդակությամբ. «Իրանի Իսլամական Հանրապետությունը ողջունում է Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված համաձայնագիրը, որը հանգեցրեց զինադադարի և ռազմական գործողությունների դադարեցմանը, և հուսով է, որ այս համաձայնագիրը, որի սկզբունքները ներառված էին նաև ԻԻՀ առաջարկած ծրագրում, կհանգեցնի Կովկասի տարածաշրջանում տևական խաղաղության հաստատման վերջնական համաձայնեցումներին, այնպես որ իր մեջ հանդարտություն և երջանկություն ներառի տարածաշրջանի բոլոր երկրների ժողովուրդների համար և առկա մտահոգությունների փարատում լինի: ԻԻՀ-ն ընդգծում է ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը հարգելու, պետական միջազգային սահմանները չփոփոխելու, գրավյալ տարածքներն ազատելու, փախստականների հետ վերադարձնելու, փոքրամասնությունների անվտանգությունն ու իրավունքները հարգելու, ինչպես նաև տարածաշրջանից

---

[129]Mahmoud Vaezi on Twitter: " معتقديم، در صورتيكه دو طرف درگير مناقشه به قواعد بين‌المللي از جمله تماميت ارضي كشورها و حقوق شهروندي اتباع متعهد بمانند، مذاكرات و راه حل سياسي مي‌تواند به اين بحران كهنه پايان دهد. ضمن خرسندي از پايان جنگ، اميدواريم توافق بدست آمده براي آتش‌بس اجرايي گردد." / Twitter

բոլոր թաքֆիրական ուժերի և օտարերկրյա զինյալների դուրսբերման անհրաժեշտությունը և մեկ անգամ ևս իր պատրաստակամությունն է հայտնում տարածաշրջանում կայուն խաղաղության և անվտանգության կյանքի կոչմանն օգնելու և տարածաշրջանային նախաձեռնություններին մասնակցելու առնչությամբ: ԻԻՀ-ն նաև իր պատրաստակամությունն է հայտնում օգնելու ՌԴ խաղաղապահ ուժերի տեղակայմանը շփման գծերի երկայնքով՝ հրադադարի համաձայնագրի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն»[130]:

Նույն օրը ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների 20-րդ գագաթնաժողովի իր ելույթում նշել է. «Իրանի Իսլամական Հանրապետությունը որպես երկու երկրների՝ Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հարևան, հիմնվելով տարածաշրջանի ժողովուրդների հետ բազմաթիվ պատմական ընդհանրությունների վրա, գոհունակություն է հայտնում Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ այս երկու երկրների ղեկավարների վերջին որոշման առնչությամբ՝ վերջ դնելու համար ռազմական բախումները և սկսել դիվանագիտական կարգավորման հետագա գործընթացը և հուսով է, որ երկու երկրները կկարողանան կարգավորել իրենց տարաձայնությունները խաղաղ և միջազգային իրավունքի շրջանակների մթնոլորտում: Այդ ուղղությամբ Իրանը ծրագիր ներկայացրեց՝ հրադադարի հաստատման և խաղաղության ստեղծման նպատակով, ինչպես նաև ինտենսիվ խորհրդակցություններ իրականացրեց

---

[130] وزارت امور خارجه جمهوری اسلامی ایران- بیانیه جمهوری اسلامی ایران در خصوص توافق نامه جمهوری آذربایجان ، جمهوری ارمنستان و فدراسیون روسیه , ۲۰/۰۸/۱۳۹۹, http://bitly.ws/RYAP .

հակամարտող կողմերի և այլ շահագրգիռ երկրների հետ և ողջունում է ցանկացած ջանքի գործադրում այս տարածքում լարվածության և տարաձայնությունների նվազեցման և կայունության, անվտանգության և հարատև ու արդար խաղաղության հաստատման համար»[131]:

Նոյեմբերի 11-ին ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Սեյեդ Աբբաս Արաղչին իր հարցազրույցում, անդրադառնալով ԼՂ ճգնաժամի վերջին զարգացումներին, ասել է. «Իրանի հյուսիսային սահմաններին այս ճգնաժամի առաջացումը շատ մտահոգություններ էր առաջացրել մեզ համար: Մենք Ադրբեջանի և Հայաստանի հետ ունեցել և ունենք բարեկամական և պատմական հարաբերություններ, իհարկե, Ադրբեջանի հետ՝ մեր ադրբեջանախոս հայրենակիցների պատճառով ավելի խորը հարաբերություններ են եղել, և Հայաստանի հետ էլ նորից մեր հայ հայրենակիցների պատճառով լավ կապեր ենք ունեցել և ունենք: Որոշ դեպքերում այդ բախումները վնաս պատճառեցին մեր սահմաններին և առաջացրին այլ մտահոգություններ, որոնք պահանջում էին, որ այդ բախումներն ավելի շուտ ավարտվեն»: Արաղչին, անդրադառնալով ադրբեջանցիների և հայերի միջև

---

[131] آماده ایم در مسیر مبارزه با کووید- 19 تجربیات خود را با کشورهای عضو سازمان به اشتراک گذاریم/ ایران قادر به تامین نیازهای اصلی بسیاری از کشورهای منطقه و اعضای سازمان شانگهای است/ ابراز خرسندی از تصمیم اخیر مقامات باکو و ایروان برای پایان دادن به درگیری‌های نظامی و شروع فرآیند حل و فصل دیپلماتیک/ بزودی با تکمیل مسیر ریلی رشت – بندرانزلی در حاشیه دریای خزر، مسیر ریلی کریدور شمال جنوب به واقعیت می پیوندد/ اکنون نوبت منتخبان و رهبران جدید آمریکاست که پیام ملت آمریکا برای تغییر را درک کنند/ تهران حصول امنیت پایدار را جز از طریق همکاری، مشارکت و صلح میسر نمی داند, 20 آبان 1399, https://president.ir/fa/118096 .
Iran ready to share experiences in combating COVID-19 with other member states/Iran can supply needs of most regional countries, including SCO member states/ Now the field is clear for new US elected leaders to grasp the message of their people for a change, (president.ir).

պատմական լարվածության արմատներին, ասել է. «Իրավիճակը պահանջում էր, որ Իրանն իր դերն ունենա այդ ընդհարման նվազեցման և հնարավորության սահմաններում դրա ավարտին հասցնելու հարցում: Մենք բոլոր կողմերի հետ ունեցած խորհրդակցություններով առաջարկային ծրագիր պատրաստեցինք, այնուհետև որոշվեց այդ ծրագիրը ներկայացնել տարածաշրջան այցի ընթացքում և փորձենք կոնսենսուս ստեղծել այդ ծրագրի սկզբունքների վերաբերյալ, իսկ մյուս կողմից այդ երկրներին փոխանցենք Իրանի մտահոգությունները: Սկզբունքներն ու շրջանակները, որոնք ներկայացրեցինք զինադադարի և բանակցությունների մեկնարկի համար, իրենց տեղն են գտել, և համաձայնությունը, որը վերջապես երկու օր առաջ տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի միջև Ռուսաստանի միջնորդությամբ, իրականում ԻԻՀ ծրագրի շրջանակներում է և հիմնված է մեր առաջարկների վրա: Այս առումով ամենակարևոր սկզբունքը եղել է Ադրբեջանի գրավյալ տարածքների ազատումը: Այդ բախումների առաջին իսկ օրվանից Իրանի դիրքորոշումը եղել է բռնազավթման դեմ: Մենք, չնայած այս երկու երկրների հետ ունեցել ենք լավ հարաբերություններ, բայց բռնազավթմանը դեմ լինելը հակամարտության հենց մեկնարկից՝ 1990-ականների սկզբից եղել է ԻԻՀ սկզբունքային դիրքորոշումը, և այդ դիրքորոշումը պահպանել ենք անցած 30 տարիների ընթացքում և ջանքեր ենք գործադրել դրա ուղղությամբ: Հայաստանն ու Ադրբեջանն իրենք են նախընտրել հարցերը լուծել Մինսկի խմբի միջոցով, սակայն այս խումբն էլ անցած 30 տարիների ընթացքում չկարողացավ լուծել այդ ճգնաժամը և, ի վերջո, հանգեցրեց բախումների: Հրադադարը, որը հաստատվել է այս օրերին եղել է հենց այն մեր առաջարկի համաձայն, ու ըստ ժամանակացույցի՝

Հայաստանը դուրս է գալիս գրավյալ տարածքներից, հայերի իրավունքներն ու նրանց անվտանգությունը պետք է երաշխավորվի, փախստականների վերադարձը և գերիների ու դիակների փոխանակումն այս ամենը նախատեսվել էր: Մի շարք միջազգային սկզբունքների և հիմունքների համաձայն, որոնք, մեր կարծիքով, փոփոխման ենթակա չեն և դրանցից ամենակարևորը բոլոր երկրների տարածքային ամբողջականության պահպանումն ու երկրների ինքնիշխանության հարգումն է, սահմանների անփոփոխությունը և տարածաշրջանի աշխարհաքաղաքականության պահպանումն է, սրանք մտահոգություններն էին, որ մենք փոխանցել ենք»: Քաղաքական հարցերով փոխարտգործնախարարն ավելացրել է. «Թաքֆիրական ուժերի ներկայությունը, միանշանակ, վտանգներ կառաջացնի տարածաշրջանի անվտանգության համար, և նրանց ներկայությունն այս ճգնաժամում ոչ պարտադիր է եղել, և այժմ, երբ զինադադար է, անպայման պետք է դուրս գան տարածաշրջանից, և մենք չենք հանդուրժի դրանց ներկայությունը մեր սահմաններին: Սիոնիստական ռեժիմի դավադիր դերն այս հակամարտությունում էլ բավականին ակնհայտ է, և դա էլ մտահոգություններ է ստեղծում տարածաշրջանի ապագայի համար: Սա էլ մի կետ էր, որ ներգրավված ինչ-որ կերպով կողմերին զգուշացրինք, որ չպետք է թույլ տան այդ ռեժիմը կարողանա տարածաշրջանում ոտքի տեղ բացել, որ տարածաշրջանում մշտական լարվածության և ճգնաժամի կետ ստեղծի: Նրանք, միանշանակ, ոչ մի լավ մտադրություն չունեն տարածաշրջանի ոչ մի երկրի օգնության հարցում, և հետևում են իրենց չարամիտ քաղաքականությանը, և այդ մտահոգությունները փոխանցվել են: Այդ այցը թե՛ բախումները դադարեցնելու, թե՛ մտահոգությունները

փոխանցելու առումով շատ օգտակար և անհրաժեշտ էր»: Արաղչին ցանկացած հիմնավորումից զուրկ է համարել այս ճգնաժամում թաքֆիրական ուժերի ներկայությունը և ասել. «Ոչ մի հիմնավորում այդ անձանց ներկայության համար գոյություն չունի: Բոլորը պետք է իմանան, որ դրանց առկայությունը մեր սահմանների մոտ ոչ մի կերպ չի հանդուրժվի, և ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ լինի անհատապես ենք ձեռնարկելու: Այս մտահոգությունը փարատման ընթացքում է, և տարածաշրջանի երկրները մեզ հավաստիացրել են, որ այդ անձանց ներկայությունը կլինի ժամանակավոր, և նրանք շուտով դուրս կգան»: Ի պատասխան սահմանամերձ շրջաններին հասցված վնասների մասին մեկ այլ հարցի, նա ասել է. «Բարեբախտաբար, մենք մարդկային կորուստներ չենք ունեցել, և որոշ գյուղերին ու տներին հասցված վնասները շատ չէին: Մենք այդ ամենը իր ժամանակին գրանցել և հայտագրով զգուշացրել ենք հայկական և ադրբեջանական կողմերին: Որոշ դեպքերում ստիպված եղանք զգուշացում տալ, որ անպայման հեռու մնան մեր սահմաններից և ուշադիր լինեն հրաձգությունների և կրակոցների ժամանակ: Այս ամենը արձանագրվել է, և այժմ էլ խնդրել ենք ԳՇ-ից և ՆԳ նախարարությունից՝ մեզ տան վնասների ամփոփումները, որպեսզի մենք հետամուտ լինենք պատճառված վնասների պահանջին երկու երկրներից: Վնասի մի մասն էլ պայմանավորված է անցած 30 տարիների ընթացքում շարունակվող հակամարտության հետ: Օրինակ՝ Խոդաֆարինի ամբարտակը կառուցվել է Իրանի գումարներով՝ Ադրբեջանի հետ համատեղ պայմանագրով, մինչդեռ այդ ամբարտակը գտնվում էր Հայաստանի բռնազավթման տակ: Մենք պայմանավորվեցինք Ադրբեջանի հետ և ամբարտակն ինքներս կառուցեցինք և

դրա գումարն էլ տվեցինք: Գրեթե 10 տարի է, ինչ այս ամբարտակը պատրաստ էր շահագործման՝ հենց այդ նույն բախումների, բռնազավթման և ամբարտակում ադրբեջանական կողմի ներկայության և նրանց կողմում գտնվող էլեկտրակայանի կառուցման անհնարինության պատճառով ամբողջական շահագործման չի հասել: Հուսով ենք, որ գրավյալ տարածքները Ադրբեջանին վերադարձնելով և տարածքներում խաղաղության հաստատմամբ թե՛ մեր սահմանամերձ գոտիները հանգիստ լինեն, և թե՛ ամբարտակը հնարավորություն ստեղծվի շահագործել»: Ըստ դիվանագետի՝ այլ իրավիճակ է լինելու սահմանային տնտեսական և առևտրային փոխգործակցություններում: Ըստ նրա՝ հնարավորություններից նույնպես պետք է օգտվել, որոնք ստեղծվել են բախումների ավարտից հետո[132]:

Այդուհանդերձ իրանական կողմում սկսվեցին մտահոգություններ նկատվել, մասնավորապես՝ հրադադարի կառավարման կետում ռուսական և թուրքական զինուժի ներգրավման և Մեղրիի տարածքով միջանցքի տրամադրմամբ իրենց շուրջ, այսպես կոչված, օղակի փակման վերաբերյալ: Առավել սուր մեկնաբանություններ և կարծիքներ առաջ եկան նաև առ այն, որ Իրանին դուրս են թողել գործընթացից, որն ամենամոտն է գտնվում խնդրին:

Որպես վերջաբան կարելի է նշել «ԻՌՆԱ»-ի նոյեմբերի 13-ի «Արաղչիի բացատրությունները Ղարաբաղի զինադադարի համաձայնության վերաբերյալ անհիմն լուրերի մասին» վերտառությամբ հաղորդագրության մասին: Դրանում քաղաքական հարցերով ԱԳ նախարարի տեղակալ Արաղչին ասել է. «Ոչ մի փոփոխություն չի լինի դեպի

---

132 عراقچی: از آمدن بایدن ذوق‌زده نیستیم - ایرنا, ۲۱آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYBL.

Հայաստանի ուղղություն կամ Ադրբեջան Իրանի տարանցիկ ուղիներում»: Քաղաքական հարցերով ԱԳ նախարարի տեղակալը «ԻՌՆԱ»-ի լրագրողին ասել է. «Ցավոք, կեղծ քարտեզների հետ միասին սխալ և ապակողմնորոշիչ տեղեկատվություն է տարածվում համացանցային տիրույթում, և արծարծվում են այնպիսի պնդումներ, ինչպիսիք են Իրանի հետ Հայաստանի սահմանը կտրելը, միջանցք ստեղծելը Հայաստանի տարածքի ներսում կամ նույնիսկ Իրանի տարածքի ներսում, տարածաշրջանի աշխարհաքաղաքականություն փոխելը և այլն…, որ սկզբից իրական չէ և արվում է քաղաքական և քարոզչական հատուկ նպատակներով»: Արաղչին, անդրադառնալով համաձայնության հիմնական քարտեզին, ասել է. «Ինչպես երևում է այս քարտեզում, Իրանի ու Հայաստանի սահմանի երկայնքով աշխարհագրական գոտի ստեղծելու շատ քննարկվող հարցը բոլորովին անհիմն է»: Իրանի խաղաղության ծրագիրը ներկայացնելու համար նախագահի բանագնացն ասել է. «Այն, ինչ նշված է Ղարաբաղի զինադադարի համաձայնության մեջ, Հայաստանի տարածքի ներսում Նախիջևանից Ադրբեջանի հիմնական տարածք մայրուղային միջանցքի կամ ավելի ճիշտ՝ տարանցիկ երթուղու ստեղծումն է, որի անվտանգությունը երաշխավորելու է Ռուսաստանի միջոցով, և հստակ ուղին էլ դեռ հայտնի չէ»: Արաղչին ասել է. «Սա նոր գաղափար չէ, և դրա ձևավորումը երկար պատմություն ունի, և եթե այն կյանքի կոչվի, որն ուղեկցվում է հազար բայցով ու եթեով, ոչ մի փոփոխություն չի ստեղծի դեպի Հայաստանի ուղղություն կամ Ադրբեջան Իրանի տարանցիկ ուղիներում»: ԱԳ փոխնախարարը նշել է. «Այդուհանդերձ, մեր խորհրդակցությունները բոլոր կողմերի հետ շարունակվում են: Նոյեմբերի 11-ի երեկոյան այս կապակցությամբ երկար

զրույց եմ ունեցել Թեհրանում Ռուսաստանի դեսպանի հետ»[133]:

Եզրակացություն

Ամփոփելով՝ նշենք, որ Իրանը 1990-ականներից մինչև Արցախյան 44-օրյա պատերազմը, ի տարբերություն մերձավորարևելյան զարգացումների, թերևս, ոչ բավարար լրջությամբ էր մոտենում իր հյուսիս-արևմտյան անմիջական հարևանությամբ գտնվող հակամարտությանը՝ համարելով այն ռուսական ազդեցության գոտում գտնվող հարևան ոչ այդքան մեծ երկու երկրների միջև տարաձայնություն: Մյուս կողմից, Իրանը, ելնելով բազմազգ երկրի ներքին քաղաքական կայունության պահպանման և հնարավոր անջատողականության կանխման պահանջներից, մշտապես կողմ է տարածքային ամբողջականության սկզբունքը հարգելու անհրաժեշտությանը: Մեկ այլ համոզման համաձայն, որը ևս բխում է իր անվտանգության ապահովման անհրաժեշտությունից և այդ երկրի շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական զարգացումներից՝ Իրանը մշտապես դեմ է արտահայտվում տարածաշրջանում այլ ուժերի ներկայությանը:

Սակայն, Արցախյան երկրորդ պատերազմի մեկնարկից մի որոշ ժամանակ անց Իրանը, գիտակցելով, մասնավորապես՝ հարևան այլ երկրների և արտատարածաշրջանային ուժերի, այս դեպքում՝ Թուրքիայի

---

133 توضیحات عراقچی درباره شایعات بی‌اساس در خصوص توافق آتش بس قره باغ - ایرنا, ۲۳آبان۱۳۹۹, http://bitly.ws/RYC5.

և Իսրայելի ներգրավվածության վտանգը, վերանայեց ԼՂ հակամարտության նկատմամբ իր կարծրացած մոտեցումն ու սահմանային շրջաններում ապահովեց ռազմական ներկայություն: Քաղաքականության, այսպես կոչված, շտկումը տեղի ունեցավ երկրի գերագույն առաջնորդի 2020 թ. նոյեմբերի սկզբին արտահայտած տեսակետներից հետո, որում ուշագրավ է, որ առաջին անգամ նշվեց Արցախի հայերի իրավունքների հարգման անհրաժեշտության մասին:

Հիշեցնենք, որ մինչ այդ գերագույն առաջնորդին էր վերագրվում «Ղարաբաղն իսլամական հող է» կեղծ արտահայտությունը, որի վերաբերյալ որևէ պաշտոնական հայտարարություն, տեսագրություն կամ ձայնագրություն գոյություն չունի[134]: Իսկ տվյալ դրությամբ խնդրի վերաբերյալ վերջին տեսակետի արտահայտումը եղել է 2022 թ. հուլիսի 19-ին, երբ ԻԻՀ գերագույն առաջնորդ Ալի Խամենեին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և ԹՀ նախագահ Ռեջեփ Թայիբ Էրդողանի հետ Թեհրանում կայացած հանդիպումների ընթացքում, ինչպես նաև թվիթերյան գրառմամբ ընդգծել է, որ ԻԻՀ-ն երբեք չի հանդուրժելու որևէ քաղաքականություն և ծրագիր, որը կհանգեցնի Հայաստանի և Իրանի հազարամյա սահմանի փակմանը[135]: Թեև գերագույն առաջնորդն իր ուրախությունն է հայտնել նաև առ այն, որ ԼՂ-ն վերադարձվել է Ադրբեջանին, այդուհանդերձ հայ-իրանական սահմանների անքակտելիության մասին դիրքորոշումն իրանական տարբեր պաշտոնյաներ և

---

[134] «Նման լկտի ստի ջատագովները սպասարկում են բացառապես Բաքվի շահերը». Azariha, հուլիս 19, 2020, https://www.aravot.am/2020/07/19/1124570/.

[135] Իրանը չի հանդուրժի Հայաստանի հետ սահմանի փակում. Խամենեին՝ Պուտինին, հուլիս 20, 2020, https://www.azatutyun.am/a/31951445.html. https://twitter.com/Khamenei_fa/status/1549456406339887108.

մեկնաբաններ շարունակում են հիշատակել իրենց հայտարարություններում, որոնք տեսահոլովակների միջոցով ժամանակ առ ժամանակ շրջանառվում են նաև ԻՀՊԿ անվան տակ ներկայացվող տելեգրամյան ալիքներով:

Իրանի համար սկզբունքային է արտաքին աշխարհի հետ բոլոր ցամաքային ուղիների և 15 հարևան պետությունների հետ սահմանային կապի պահպանումը: Ուստի, որևէ արտատարածքային միջանցք, որը կարող է վտանգել հարևան երկրներից մեկի հետ հաղորդակցային կապի խաթարմանը հույժ կարևորություն ունի այդ երկրի համար: Իրանական փորձագիտական շրջանակներում, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք» սին տերմինաբանությանը տրվում է նաև «ՆԱՏՕ-ի միջանցք» անվանումը, որի կանխումն ապահովելու համար Իրանը կդիմի քաղաքական, սակայն ոչ ռազմական միջամտության բոլոր հնարավոր միջոցների: Ըստ անհրաժեշտության, կանցկացվեն միայն սահմանամերձ շրջանի հերթական զորավաժություններ, սակայն ոչ ավել, քանի որ առկա է համապատասխան գիտակցություն, որ չպետք է տեղի տալ որևէ ռազմական գործողություններում ներքաշվելու Իրանի հանդեպ ոչ բարեկամական տրամադրված երկրների հրահրումներին:

Հարկ է նշել, որ Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Իրանը մի քանի զորավարժություններ է անցկացրել Ադրբեջանի հետ սահմանակից շրջաններում, որոնցից ամենանշանակալիցը 2022 թ. հոկտեմբերին էր, երբ Արաքս գետի վրա լողացող կամուրջներ տեղադրվեցին՝ ռազմատեխնիկայի տեղափոխման նպատակով[136]: Ի դեպ,

[136] Իրանը լայնածավալ զորավարժություններ է սկսել Ադրբեջանի հետ սահմանակից շրջաններում, հոկտեմբեր 17, 2022, https://www.azatutyun.am/a/32088127.html.

պետք է արձանագրել նաև, որ այդ շրջանում աննախադեպ լարվածություն առաջացավ իրանա-ադրբեջանական վայրիվերումներով բնորոշ հարաբերություններում, որոնք բավականաչափ սրվեցին 2023 թ. փետրվարին Թեհրանում Ադրբեջանի դեսպանության վրա, ըստ իրանական կողմի՝ կենցաղային դրդապատճառներով պայմանավորված, զինված հարձակումից հետո[137]: Իսկ 2022 թ. հոկտեմբերին էլ Կապանում բացվեց ԻԻՀ գլխավոր հյուպատոսությունը[138]:

Ինչ վերաբերում է Իրանի առաջարկային ծրագրին, ապա պետք է հիշատակել նաև, որ այդ երկիրն առաջինն էր իր միջնորդական առաքելությամբ, որ 1992 թ. փորձեց ներդրում ունենալ ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործում: Սակայն այդ շրջանի ռազմական գործողությունների թեժացումը թույլ չտվեցին կյանքի կոչել միջնորդական ջանքերը[139]: Այդուհանդերձ, նախապատվություն տալով տարածաշրջանի երկրների միջոցով տարածաշրջանային խնդիրները կարգավորելու մոտեցմանը, Իրանը հանդես եկավ 2020 թ. հոկտեմբերի վերջին վերը հիշատակված ծրագրով: Ինչն էլ, թերևս, համահունչ դարձավ 2021 թ. դեկտեմբերին կայացած առաջին հանդիպման[140], սակայն մինչ այժմ որևէ հետագա ընթացք չունեցած «3+3» հարթակի ձևավորմանը:

---

[137]Զինված հարձակում Թեհրանում Ադրբեջանի դեսպանատան վրա, հունվար 27, 2023, https://www.azatutyun.am/a/32242700.html.

[138] Կապանում տեղի է ունեցել ԻԻՀ գլխավոր հյուպատոսության բացման արարողությունը, հոկտեմբերի, 21, 2022, https://www.mfa.am/hy/speeches/2022/10/21/consulate_iran/11696.

[139] Իրանի միջնորդական ջանքերը, https://www.nkr.am/hy/iranian-mediation.

[140]ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը մասնակցել է տարածաշրջանային խորհրդակցական հարթակի ձևավորմանն ուղղված առաջին հանդիպմանը, 10 դեկտեմբերի, 2021, https://www.mfa.am/hy/press-releases/2021/12/10/dfm-3+3/11239.

Այսուհանդերձ, Իրանը, փորձելով ադրբեջանական կողմի հետ հարաբերությունների կարգավորմամբ ապահովել իր ներկայությունն Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում, առանց ուժի բացահայտ գործադրմամբ, առավելապես, նպատակ ունի վերահսկելի դարձնել իր սահմանների մոտ հայտնված Իսրայելի ներգրավվածությունն ու Հարավային Կովկասի տարածաշրջանային զարգացումներում և նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում մեկուսացված չմնալ հետագա իրադարձություններից:

VAHAGN AFYAN
PhD, Head of Bordering Countries Department of the Ministry of Foreign Affairs, RA
E-mail: v.afyan@mfa.am

OBSERVATIONS ON IRANIAN NEWS, EXPERT AND OFFICIAL REACTIONS DURING THE 44-DAY WAR OF ARTSAKH

The article presents in detail the reactions of the Iranian side and the publications of official positions during the 44-day Nagorno-Karabakh war. Mainly, the messages of the official news agency "IRNA" are presented in translation, which include the positions of the officials of the Islamic Republic of Iran (IRI), as well as some experts and journalistic comments.

With the presented chronology, it is interesting to observe the views expressed by the Iranian side during the hot combat operations. The article is conventionally divided into pre-activation phase, proposal program and position formation of the Iranian side. The conclusion section also refers to some of the most important events that took place after the hostilities.

The study can make Iran's policy in the South Caucasus, particularly towards Armenia and Azerbaijan, more understandable.